

Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՄԻԶԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԵՆՔԵՐԻ  
ՏԵՍԱԿՆԵՐԸ

Առանձնատիպ Հայաստանի Պետական  
Պատմական թանգարանի «Աշխատություններ»  
հատոր II-ից, 1949 թ.



ՀԱՅԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ГОСУДАРСТВЕННЫЙ ИСТОРИЧЕСКИЙ МУЗЕЙ АН АРМ. ССР

Աշխատություններ

№ 2, 1949

Труды

ՀԱՅԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԱՅԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ՎԱԼԵՆՏԻՆԱ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՄԻԶԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԵՆՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած բազմադարյան քախումների և կոփվների վկաներն են հանդիսանում բացի պատմագիրների վկայություններից, նաև նյութական կովտուրայի հարուստ մնացորդները, որոնց մեջ զգալի տեղ են բռնում զենքերը։ Այդ զենքերով կարելի է բնորոշել ժամանակի մարտական տեխնիկան, որը և հանդիսանում է մեր քննության նյութը։

Հայկական բարձրավանդակը 1-ին դարից մինչև 15-րդ դարը ենթակա է եղել տարբեր տիրապետողների, որոնց դեմ հայ ժողովուրդը շարունակ պայքարել է՝ իր անկախությունը և ազգային ինքնուրույնությունը պահպանելու համար։

Հայաստանը, ունենալով կարևոր ստրատեգիական նշանակություն, օտար նվաճողների համար դարձել էր կովի հիմնական կենտրոնավայր և դրա համար էլ օտար նվաճողներն աշխատում էին իրենց ձեռքում պահել այն։ Տիգրան Բ-ի գահ բարձրանալուց սկսած՝ Հայաստանի համար ստեղծվել էին բարենպաստ պայմաններ։ Տիգրան Բ-ին հաջողվել էր ոչ միայն ստեղծել ուժեղ, միասնական անկախ պետություն, այլև կատարել նորանոր նվաճումներ և պայքարի դուրս գալ Արևմուտքում հետզհետե հզորացող և նվաճողական ձգտումներ ունեցող հոռմեական կայսրության, իսկ Արևելքում էլ Պարթևական հզոր պետության դեմ։ Տիգրանն իր նվաճումների ընթացքում մտահոգված է եղել ուազմական տեխնիկայի կատարելագործման և բանակը հիմնովին վերակառուցելու հարցով։ անհրաժեշտ էր բանակը հարձակողական և պաշտպանողական զենքերով ու զրահներով և մարտակառքերով հարմարեցնել մեծ պատճրազմների պահանջներին։ այլապես հնարավոր չէր լինի ոչ միայն պետության սահմաններն ընդարձակել, այլև չէր կարելի դիմադրել հարձակվողներին՝ երկիրը պաշտպանելու համար։

Սակայն, Հայաստանի համար ավելի ճակատագրական և կործանարար եղավ Պարսկաստանում հաստատված Սասանյան պետությունը, որն անընդհատ պատերազմների մեջ էր Հայաստանի հետ:

Հայ նախարարները Սասանյան Պարսկաստանի ոտնձգության դեմ ո՛չ թե լռում, այլ ռամիկ ժողովրդի հետ միասին բարձրացնում էին համաժողովրդական ապստամբություն, որի ղեկավարը հանդիսացավ ժամանակի ամենալավ ստրատեգ և տաղանդավոր զորավար Վարդան Մամիկոնյանը:

Ավարայրի ճակատամարտը հայ ժողովրդի հերոսական ելույթն էր սասանյան բռնակալության դեմ՝ իր կորցրած անկախությունը վերականգնելու համար:

7-րդ դարի 40-ական թվականներին Հայաստանը ենթարկվեց արաբական արշավանքներին և անցավ խալիֆայության երկարատև տիրապետության տակ: Հայկական բարձրավանդակը ինչքան որ ստրատեգիական նշանակություն ուներ Բյուզանդիայի համար՝ կասեցնելու արաբների առաջինադացումը դեպի կայսրության պրովինցիաները, այնքան էլ կարևոր դեր էր խաղում խալիֆայության համար՝ ծունկի բերելու բյուզանդական կայսրությանը: Արաբներն իրենց արշավանքների ընթացքում զգացել էին հայ ժողովրդի դիմադրական ուժը, ահա թե ինչու արաբական խալիֆայությունը սկզբնական շրջանում անհամեմատ ավելի մեղմ քաղաքականություն վարեց Հայաստանի նկատմամբ:

Հայաստանում 8—9-րդ դարերում ավելի ուժեղացավ խալիֆայությունից ազատագրվելու պայքարը, որն արտահայտվեց մի շարք ապստամբություններով և երկարատև արյունալի կռիվներով. դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել 773—775 թ. թ. և 851 թ. մեծ ապստամբությունները:

Բագրատունյաց թագավորությունը, սկսած 10-րդ դարի վերջից, ոչ միայն վերջնականապես թոթափեց խալիֆայության լուծը և դադարեց նրանց հարկատու լինելուց, այլև սկսեց ինքնուրույն քաղաքականություն վարել Բյուզանդիայի հետ:

Բագրատունյաց թագավորության անկումից հետո, Բյուզանդիան աշխատեց քայքայել Հայկական բարձրավանդակի ռազմական ուժը, բայց ինքն էլ անկարող եղավ պաշտպանել Հայաստանի սահմանները՝ սելջուկ թուրքերի արշավանքներից: Այդ պատճառով իսկ 13-րդ դարի կեսերին Հայաստանը ենթարկվեց մոնղոլների ուժեղ հարձակմանը և այնուհետև, 15-րդ դարում, ոտնա-

կոխ եղավ լենկթեմուրի հրոսակախմբերի կողմից և հասավ ծայր աստիճան քայքայման: Այդ բոլորի հետեանքը եղավ այն, որ նազրկվեց իր ինքնուրուցն պետությունը կազմակերպելու հնարավորությունից: Այդ երկարատև և դարավոր կոփիվների ընթացքում Հայաստանում գործածված զենքերը բազմազան են եղել, ժամանակի ընթացքում նրանք ենթարկվել են վերամշակման, առաջ են եկել զենքի նոր տեսակներ, որոնք կիրառվել են մեր երկրում թե՛ Հայկական զորքի, թե՛ նույն հողամասում կովող օտար իշխողների կողմից:

\* \* \*

Հայաստանը մետաղագործության հետ կապված արհեստների զարգացման համար միշտ էլ ունեցել է նյութական բազա, որով հետև Հայկական բարձրավանդակը հարուստ է եղել բազմատեսակ մետաղահանքերով: Դեռևս երկրորդ հաղարամյակի սկզբից Հայաստանի բնիկները ծանոթ են եղել մետաղին, մշակել և օգտագործել են այն, իսկ միջին դարերում, բնականաբար, մետաղագործությունը տեխնիկական տեսակետից ավելի կատարելագործվում ու զարգանում է:

Հայ պատմագիրները զանազան կապակցությամբ հիշում են Հայաստանում օգտագործված տարրեր հանքերի մասին: Այսպես՝ Հակոբ Մծրնա հայրապետի մասին հիշվում է, թե նա ճանապարհորդելով Ռշտունիքով՝ «Գայր հասանէր ի լեառն երկաթահատացն և կապարահատացն»,<sup>1</sup> իսկ Փարպեցին հիշում է՝ «Երկաթ ելանէր յԱյրարատ նահանգէն». ապա շարունակում է՝ «Եւ պղինձ ելանէր յԱյրարատ նահանգէն»:

Հույն պատմագիրները (6-րդ դար մ. թ. ա.), հենվելով հին աղբյուրների վրա, վկայում են, որ Սկ ծովի հարավ-աբովելյան երկրներում ապրում էր խալիք անունով վարժ ու փորձված երկաթագործ մի ցեղ, որի անունը հույների մեջ դարձել էր անվանական բառ՝ «Խալիպ», որով նրանք անվանում էին պողպատը, մշակված երկաթի այդ ամենաբարձր տեսակն ու ամենադժվար դարբնումի արդյունքը:<sup>2</sup>

<sup>1</sup> Փ. Բուզանդ, «Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832 թ., էջ 24:

<sup>2</sup> Պրոֆ. Խ. Սամվելյան, «Հին Հայաստանի կուլտուրան», Բ. հատոր, էջ 14:

Արաբ պատմիչ իրն Բատուտայի աշխատությունից տեղեկանում ենք Երզնկայի պղնձի հանքերի, պղնձե ամանների և «Բայսուզ»-ների (աշտանակների) մասին:<sup>1</sup>

12—13-րդ դարի արաբ ճանապարհորդ Յակուտի աշխարհագրական բառարանում մատնանշված են երկաթի հանքեր Վարաժնունիքում և Բալուի մոտ, իսկ պղնձե հանքեր՝ Գուգարքում:

Կիրակոս Գանձակեցին, խոսելով մոնղոլական հարկային քաղաքականության մասին, հիշում է, որ երկաթահանքերն ու աղահանքերը հարկի տակ էին գտնվում, միևնույն ժամանակ ավելացնում է, թե՝ «այլև զծովակս, և զլիճս ձկնորսաց, և զերկաթահանս, զդարբինս... և զամենայն աղահանսն առին...»:<sup>2</sup>

17-րդ դարի մատենագիր Հակոբ Կարնեցին իր «Տեղագիր Վերին Հայոց» փոքրիկ աշխատության մեջ հետաքրքրական տեղեկություններ է տալիս Գյումուշխանի հանքերի մասին: «Եւ անտի ուղիղ ի կողմն հիւսիսոյ ձորն է Մանախոյ. ունի գիւղք և փոքր բերդօրայք... եւ ունի քաղաք զկիմիւշխանան... եւ բնակիչք սորա հայ և հոռոմք բազում... և ելանէ աստի ոսկի և արծաթ ընտիր բազում. ելանէ նաև պղինձ, արծիճ և երկաթ բազում, որ Արդրում և շրջակայքն նորա լնում»:<sup>3</sup>

Բացի գրավոր աղբյուրներից, մեզ հասել են հնից մնացած բազմաթիվ մետաղե առարկաներ, որոնք ցույց են տալիս մետաղագործության զարգացած վիճակը հին Հայաստանում:

Ինչպես գիտենք, ուրարտացիների ժամանակ մետաղի մըշակման գործը գտնվում էր բարձր աստիճանի վրա. դա երևում է Վանի և Կարմիր Բլուրի 8-րդ և 7-րդ դարերի (մ. թ. ա.) մնացորդներից: Այդ նույն դարերում, մետաղագործության տեխնիկայի զարգացումով, խիստ տարածվեց երկաթագործությունը, արհեստավորները տիրապետեցին երկաթագործության մշակման տեխնիկային: Երկաթի ձուլման համար պահանջվում էր չերմության խիստ բարձր աստիճան և ավելի մեծ արվեստ՝ դարբնելու համար: Ուրարտացիների օրով իսկ երկաթից պատրաստված գործիքները և զենքերը դարձան խիստ անհրաժեշտություն և մասամբ

<sup>1</sup> Իր ն Բատուտա, թարգմ. պրոֆ. Աճառյանի, Երևան, 1940 թ., էջ 31:

<sup>2</sup> Կ. Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912 թ., էջ 349:

<sup>3</sup> Յակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 15: Հմմտ. է «Հույն պատմիչների վկայությունը հին Հայաստանի ոսկե հանքերի և նրանց տեղի մասին», Գիտական Տեղեկագիր ՀՍԽՀ Պետ. Համալսարանի, № 1, Երևան, 1925 թ., էջ 4:

գործադրությունից դուրս հանվեցին բրոնզե ու պղնձե գործիքները և զենքերը, երկաթը որպես ավելի դիմացկուն և ավելի կարծր մետաղ մնաց իրու գերիշխող, որից պատրաստվում էին զենքի ամենակարևոր մասերը:

Այսպիսով, մետաղը դառնում է մի հզոր միջոց, որը փոխում է մարդկային պատմությունը, կատարելագործելով արտադրության միջոցները և զարգացնելով աշխատանքի արտադրողականությունը: Միաժամանակ զենքն արդեն իշխող դասին հնարավորություն է տալիս համարտակելու հաղարավոր մարդկանց աշխատանքի արդյունքները՝ հասցնելով նրանց ճորտացման և ստրկացման աստիճանին:

Հայկական լեռնաշխարհում բրոնզի ու վաղագույն երկաթի դարին սլատկանող պեղված դամբարաններում մենք տեսնում ենք մետաղյա տարբեր տեսակի զենքեր: Հնադարյան մարդն իր գոյությունը պահպանելու, բնությունից իր ապրուստի միջոցները հայթայթելու և միաժամանակ գիշատիչ գաղաններից պաշտպանվելու համար ստեղծել է զենքը, որը եղել է քարից, ոսկրից, փայտից, իսկ հետագայում նաև մետաղներից, և որը երկար դարերի ընթացքում կատարելագործվել է: Այդ ժամանակաշրջանում մարտական և տնտեսական գործիքների միջև գրեթե շատ քիչ էր նըկատվում տարբերություն. օրինակ՝ քարե կամ բրոնզե տապարը հին մարդու համար ծառայել է թե՛ իրու տնտեսական գործիք և թե՛ իրու մարտական զենք: Նույնը կարելի է ասել դանակի և այլ գործիքների մասին:

Հնագույն շրջանին պատկանող բնակավայրերից հարուստ և արժեքավոր նյութ ենք ստացել Թոփրաղկալայի, Որնակի, Լոռու, Շեյթանդաղի, Ռեդկին-Լագերի և Երվանդ Լալայանի մի շարք հնավայրերի պեղումներից, իսկ վերջին տարիներում Կիրովականի դամբարաններից և Կարմիր Բլուրի պեղումներից: Այդ պեղածո նյութերից մեծ արժեք են ներկայացնում տապար ձուկելու կաղապարները, վահանը, կապարճը և սաղավարտը, որոնք հայտաբերվել են Կարմիր Բլուրի պեղումների ժամանակ:

Պեղածո նյութերը հարուստ են տարբեր տեսակի նետերով, դաշույններով, սուսերներով, սակրերով. սակայն դաշույնը եղել է գերիշխող զենք: Գտնված սուսերներից ամենից լավ պահպանվել է Զորագեսի պեղումներից հայտնաբերվածը, որի երկարությունը 91 սմ. է:

Պեղումների միջոցով ձեռք բերված վերոհիշյալ նյութերը պատկանում են Հնագույն ժամանակաշրջանին, իսկ մեր ուսումնասիրությունը գլխավորապես վերաբերում է միջնադարին, որը, դժբախտաբար, զենքերի իրական մնացորդներով համեմատաբար աղքատ է:

Միջնադարյան Հայաստանը, ինչպես ցույց են տալիս գրավոր փաստերը, երկարատև կոփվների ու բախումների պայմաններում խոշոր կառուցողական գործ է կատարել ոչ միայն կրոնական շենքերի, այլև պաշտպանական մի շարք միջոցառումների ասպարեզում: Այսպես, օրինակ, կառուցվել են պարիսպներ, աշտարակներ և բերդեր, որոնք հիմնական միջոցառումներ էին քաղաքը հարձակումներից պաշտպանելու համար: Միջնադարում Հայաստանի նշանավոր կենտրոններն էին՝ Դվինը, Անին, Մանազկերտը, Խլաթը, Կարինը, Արծնը և Կարսը. պետք է նկատել, որ այդ քաղաքների ամրացումն սկսվել է նրանց հիմնադրման օրից. ավելորդ չեր լինի այստեղ այդ քաղաքներից հիշել Դվինը, որի ամրացումն ու պարսպապատումը սկսվել է դեռևս 4—5-րդ դարերում և որն ավելի ամրացվեց Արդուլ-Ազիզի օրով: Արաբ պատմիչների տվյալներից երեսում է, որ 8-րդ դարի սկզբում Հայաստանի ոստիկան Արդուլ-Ազիզին հանձնարարված է եղել վերաշինել Դվինը նախկինից ավելի ամուր. «Եինէր վերստին զքաղաքն Դուին հզօրագոյն և ընդարձականիստ մեծութեամբ քան զառաջինն, և ամրացուցանէր դրամբք և դռնափակօք, անցուցանէր շուրջ զպարսպովն պարկէնս փոսից լցեալ ջուր յապաստան ամրոցին»:<sup>1</sup>

Մի այլ տեղում դարձյալ Ղևոնդ Երեցը, խոսելով Արտավազդ Մամիկոնյանի մասին, տեղեկություն է տալիս նաև Դվինում գոյություն ունեցող զինապահեստի մասին: Նա գրում է.

«Եւ սկիզբն բանիս այսորիկ լինէր ի ձեռն Արտաւազդայ, որ էր ի տանէ Մամիկոնէից, որոյ երթեալ ի մայրաքաղաքն Դուին՝ կազմութիւն մեծ առնէր զօրաց իւրոց. և ստանայր անդ զէնս և անօթս պատերազմի, և վառէր զինքն զրահիւք և սաղավարտիւք և ամենայն սպառազինութեամբք»:<sup>2</sup>

Վերոհիշյալ փաստը ցույց է տալիս, որ այդ դարաշրջանում Դվինում եղել է խոշոր զինապահեստ: Զինտգործության խոշոր կենտրոններ են եղել էրզրումը և Խլաթը, որտեղ պատրաստվել են

<sup>1</sup> Ղևոնդ Երեց մեծի վարդապետի «Պատմութիւն հայոց», Ս.-Պետերբուրգ, 1887 թ., էջ 36:

<sup>2</sup> Անդ, էջ 138:

զենքեր, որոնց մի մասը նույնիսկ արտահանվել է տարբեր երկրներ։ Ինչպես արևելյան մի շարք երկրներում, այնպես էլ Հայաստանում զորամասերի հետ միշտ տանում էին զինագործ արհեստավորների հատուկ խմբեր, որոնք ճանապարհներին աշխատում էին զորքի կարիքների համար, այն է՝ վերանորոգում էին վնասված զենքերը կամ թե սլատրաստում էին նորերը։ Այդ առթիվ մեր պատմիշներից Ղևոնդ Երեցը հետաքրքիր տեղեկություն է հաղորդում։

«Հասանէին ի դաւառն Բագրեանդ ի գիւղն Արձնի. անդ հարկանէին զբանակս իւրեանց առ եզերք գետոյն որ ընդ նա անցանէ, և ընդ նոսա ամենայն արուեստականք և յարդարիչք զինուց, որք պատրաստէին զէնս և անօթս պատերազմի»։<sup>1</sup>

Բացի այդ՝ զինագործության մասին տեղեկություն ունենք նաև Հին Ճեռագրերից, ինչպես օրինակ 1221 թվին Անիից մեղ հասած Երազահանում,<sup>2</sup> որն արաբերենից թարգմանված է Հայերենի։ Այդ Երազահանում կան արհեստներին վերաբերող մի քանի արաբական բառեր։ Այդտեղ «զինագործությունը» Հայերեն թարգմանության մեջ պահպանել է սլեհարար բառը, արաբերեն «սլեհ», ավելացրած Հայերեն «արար» վերջավորությունը։ Այս բառը գործածական է եղել նաև Բագրատունիների ժամանակ, իսկ այդ ապացուց է, որ զինագործությունը տվյալ ժամանակաշրջանում եղել է շատ տարածված արհեստ և «զինագործ» բառի կողքին պահպանվել է «սլեհարար», որ նույնպես դարձել է գործածական։

Հայ պատմիշների մոտ կան քազմաթիվ հիշատակություններ զորքի և զորավարների սպառազինման մասին։ Նրանք նույնիսկ հիշատակում են յուրաքանչյուր զենքի տեսակներն առանձին անուններով։ Հայ պատմիշների կողմից հիշատակված և Հայաստանում գործածված զենքերն անվանապես և ֆունկցիոնալ տեսակիտից քիչ են փոփոխության ենթարկվել։ Հին ժամանակներից ի վեր գործածված զենքերն իրենց գոյությունը պահպանել են նաև հետագա դարերում, միայն տեխնիկապես ավելի մշակված։

Հայաստանի աշխարհագրական պայմանները՝ սարահարթերը, հովիտները և լեռների կտրվածությունը, պատճառներից մեկն էր, որ Հայաստանում առաջացան քազմաթիվ նախարարական ինքնուրույն տներ, որոնք տնտեսական և քաղաքական հար-

<sup>1</sup> Ղ և ո ն դ ե ա յ մեծի վարդապետի «Պատմութիւն Հայոց», էջ 148։

<sup>2</sup> Պետական Զեռագրատուն, № 695, էջ 187։

ցերում վարում էին ինքնուրույն քաղաքականություն, տնօրինելով ինչպես հարկերի գործը, այնպես էլ զորքի հարցը։ Միայն պատերազմի պայմաններում, երբ սպառնում էր ընդհանուր վտանգ, ամեն մի նախարարություն իր ունեցած զորամասով օգնության էր դալիս Արշակունի թագավորին և ենթարկվում էր մի ընդհանուր հրամանատարի՝ Հայաստանի սպարապետին։

Հայկական զորքը հիմնականում եղել է երկու տեսակ՝ հետեւյակ, որ մեծ թիւն էր կազմում, և հեծելազոր, որ նույնպես բավականին շատ էր։ Զորքի տեսակների և քանակի մասին մենք տեղեկություն ունենք Արտաշիսյան դինաստիայից էլ առաջ։ Այդ մասին մեզ հաղորդում է հույն պատմիչներից Քսենեֆոնը։ Նա Արմենիայի մասին հիշատակում է, որ նրանց հետևակի թիւը հասնում էր 40 հազարի, իսկ հեծելազորը՝ 8 հազարի։ Տիգրան Բ-ի օրով զորքի թիւը ավելի է մեծանում և ուղղական գործը տեխնիկական տեսակետից էլ ավելի է զարգանում։ Բացի առանձին ֆեոդալների զորամասերից՝ Հայոց արքունիքին կից գոյություն ուներ հեծյալներից և հետևակից բաղկացած առանձին զորախումբ, որ կազմված էր աղատներից (մանր հողատերերից) և դրա համար էլ կոչվում էր աղատագունդ կամ աղատազոր։

Հայկական զորքը տարբեր ժամանակաշրջաններում քանակական տեսակետից եղել է տարբեր։ Հայաստանը բավականին զորք է ունեցել Արտաշիսյան դինաստիայի և Հատկապես Տիգրան Բ-ի ժամանակ։ Մ. Խորենացու մոտ գործածված ուշագրավ մի դարձվածքից երեսում է, որ հայկական զորքն այնքան շատ էր, որ նրանց հաշվում էին միայն քարեր գցելով։ «Յայնժամ հրաման տայ Արատաշէս զօր յարուցանել յարենից և ի հիւսիոյ բազում յոյժ, մինչև որ գիտել նմա զհամարն, այլ յանցս և յիշեանս քարը մարդաթուի կարակառ՝ նշան բազմութեանն թողով»։<sup>1</sup> Որքան էլ այս տեղեկությունը պատմիչի կողմից շափազանցված լինի, այնուամենայնիվ փաստը մնում է փաստ, որ իրոք, այդ ժամանակ Հայաստանը մեծ բանակ պետք է ունեցած լինի, այլ կերպ հնարավոր չէր մեծ նվաճումներ կատարել։ Իսկ ավելի ուշ, հայ Արշակունիների շրջանում, հայկական զորքի թվի մասին տեղեկություն է տալիս Փավստոս Բուղանդը։ Արշակ Բ-ի և Շապուհի կոիվների մասին խոսելիս՝ Բուզանդն ասում է.

<sup>1</sup> Մովեսի Խորենացւոյ «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913 թ., էջ 115։

«Ապա տայր հրաման թագաւորն Արշակ Վասակաչ իւրում սպարապետին, գունդ գումարել, զօրս պատրաստել: Եւ նա վաղվաղակի կատարէր զհրամանս թագաւորին. շորեքհարիւր հազար զօր կուռ վառեալք, որ ընտիրք և պատերազմողք էին, լի արութեամբ արուեստաց նահատակութեան»:<sup>1</sup> Իսկ Մուշեղի սպարապետության ժամանակ Բուղանդը գրում է. «Սպարապետն հայոց Մուշեղ ժողովէր զամենայն զօրսն Հայոց աւելի ևս քան զընսուն հազար, և կազմէին պատրաստութեամբ»:<sup>2</sup>

Չնայած Արշակունիների տիրապետության ժամանակ ավելի են դրսեւրվում հայ ֆեոդալների սեպարատիստական ձգտումները, որոնք, ի դեպ, բացասական ազդեցություն են ունենում ուղմական ուժի քանակի վրա, սակայն վտանգի դեպքում, ինչպես ասացինք, այդ անջատ նախարարական զորքերը, մանավանդ Արշակ Բ-ի բանտարկությունից հետո, միասնական կերպով էին հանդես դալիս և անձնվիրաբեր կովում հանուն իրենց հայրենիքի անկախության: Այդ երեսույթն այնքան ուժեղ է արտահայտվել, որ նույնիսկ պարսից Շապուհ արքան հայկական զորքի մասին զարմանքով և դովասանքով է ասել՝ «Զի այնշափ ամք են՝ զի տէրն նոցա Արշակ կորուսեալ է ի նոցանէն, և նոքա ի պատերազմին ի նախրախուաէին...»: Շարունակության մեջ նա ավելացնում է. «Երանի որ Հայոց գնդին տէր իցէ, այնպիսի տիրասէր և միաբան միամիտ զօրացն»:<sup>3</sup>

Արշակունյաց տոհմի անկումից հետո հայկական զորքի թիվը պակասում է: Թեև Եղիշե պատմիշը հայտնում է, որ Վարդանանց ճակատամարտին հայերի կողմից 66.000 մարդ էր մասնակցում, սակայն դրանց մի մասն առանց զենքի և առանց ուղմական հանդերձանքի էր: Հետագայում Հայկական բարձրավանդակը հիմնականում զրկվում է պաշտպանողական ուժից: Եվ այդ բոլորը շնորհիվ այն հանգամանքի, որ Բյուզանդական կայսրությունը Հայաստանի նկատմամբ վարում էր տեղահանման քաղաքականություն, որը ուժեղ կերպով արտահայտվեց Վասիլ Բ-ի ժամանակ: Այդ քաղաքականության հետևանքով Հայաստանի ուղմական դիմադրական ուժը գնալով պակասեց: 11-րդ դարի պատմիչ Ա. Լաստիվերտցին մոայլ գույներով է նկարագրում հայկական զորքի նվազումը և տեղահանման դեպքերը: Պատմիշը դառ-

<sup>1</sup> Փ. Բռնադանդ, «Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832, էջ 130:

<sup>2</sup> Անդ, էջ 192:

<sup>3</sup> Անդ, էջ 202:

նապես ողբում է Հայաստանի զորական ուժի թուլացման համար, նա նկարագրում է, թե ինչպես ազնվական դասի հետ միասին գաղթում է նաև Հայկական զորքը. «Հեծելազօրն անտէրունշ շրջեալ ոմն ի Պարս և ոմն ի Յոյնս, և ոմն ի Վիրս: Սեպուհ գունդն ազատաց ելեալ ի Հայրեննեաց, անկհալ ի ճոխութենէ, մոնշեն ուր և են իրմւ զկորիմ առիւծուցն ի խշտիս իւրեանց»:<sup>1</sup>

Այս փաստերը, իրոք, ցույց են տալիս, որ Հայաստանի զորական ուժն այն չէր, ինչ որ առաջ էր. այդ ուժն արդեն քայքայվել էր և կամաց-կամաց հրապարակից վերանալու էր:

Հայկական զորքը պատերազմի պայմաններում, թե՛ Հարձակողական և թե՛ պաշտպանական մարտերի ժամանակ, վարում էր յուրահատուկ տակտիկա: Ավելորդ չէր լինի այստեղ հիշել Խորենացու նկարագրած Հայկի և Բելի կոփվը, որտեղ զորքը բաժանվում է երեք մասի՝ աջակողմյան, ձախակողմյան և կենտրոնական: Ճակատամարտի ժամանակ Հայկական զորքի դասավորման մասին մենք տվյալներ ունենք Եղիշեից, որն Ավարայրի ճակատամարտի մասին խոսելիս, բացի երեք կարգի բաժանումից, հիշատակում է առաջապահ և վերջապահ գնդեր, որոնք իրարից տարբերվում էին իրենց համազգեստներով և դրոշակով:

Հայկական զորքի շարքերում երրեմն կռվել են նաև Հայ կանայք, որոնք կատարել են աշքի ընկնող սխրագործություններ. այդ մասին դարձյալ հիշատակում է Եղիշեն (էջ 82—83) և Դրախտանակերտցին (էջ 179):

\* \* \*

Հին Հայաստանում դործածվող զենքերն ըստ իրենց ֆունկցիաների կարելի է բաժանել հետևյալ խմբերին.

1. Պարսատիկ.
2. Նետ և աղեղ.
3. Նիզակ, տեգ, գեղարդ.
4. Դաշույն.
5. Թուր, սուր, սուսեր, սվին.
6. Սակր, վաղր, մուրճ և ճիկո (ճկուռ).
7. Բերդեր քանդող մեքենաներ՝ էշ, փիլիկուան, բաբան.
8. Հրձիգ նյութեր.
9. Պաշտպանողական միջոցներ՝ վահան և զրահ:

<sup>1</sup> Ա. Լաստիվերտեցւոյ, «Պատմութիւն», Թիֆլիս, 1912, էջ 584

Նետ և աղեղ.— Այս զենքը հանդիսանալով հնագույն տեսակներից մեկը, մեծ դեր է կատարել Հայկական բարձրավանդակում տեղի ունեցած բռնոր կոհվներում:

Նետ կամ սլաք, որ երբեմն կոչվել է ձիգ, փթին, կամ դերձակ, փոքր էր լինում և անկոթ, պատրաստում էին օբսիդիան քարից, բրոնզից և երկաթից, իսկ շատ հին ժամանակ՝ նույնիսկ ուկրից (այդպիսի նմուշներ մենք ունենք Շենգավթի Յ-րդ հազարամյակին պատկանող բնակավայրի պեղումներից): Նետերն ունեն տարբեր ձևեր՝ տերեածե, կողավոր, գլանածե, նույնիսկ եռաթե: Նետերը մեծ քանակությամբ պահվում էին ուազմիկի կողքից կախվող հատուկ պատյանում, որը կոչվում էր կապարն կամ պատկանդարան:<sup>1</sup> Աղեղը կաղմված էր լինում երկու մասից՝ կամարից և լարից: Կամարը պատրաստում էին ճկուն փայտից և եղեգնից, իսկ լարը՝ աղիքից կամ կաշվից: Այս զենքի գործածության մասին մենք տեղեկություն ունենք ոչ միայն Արտաշիսյան շրջանից, այլ ավելի հին ժամանակներից և այն էլ գերազանցապես նյութական կուլտուրայի մնացորդներից, որոնցով հարուստ է Հայկական բարձրավանդակը:

Նետ ու աղեղով է պատկերացված շատ հին ժամանակների հայկական առասպելների մեջ Հայկ Նահապետը, որն ըստ 5-րդ դարում գրի առած ավանդության՝ հայ ժողովրդի նախահայրն է:

Նետ ու աղեղի կողքին, որպես հնագույն հարվածող մարտական զենք, հիշվում է պարսատիկը:

Մեր պատմիշները միշտ էլ, աղեղնավորների հետ միասին, հիշել են պարսատիկավորների հատուկ գնդերը, որոնք թշնամուն հարվածում էին քարերով: Պարսատիկը շատ հասարակ կառուցվածք ունի, նա կաշվից երկար երիզ է, կենտրոնը լայն է և կըրկնածալ գոգավոր մաս ունի, որտեղ դրվում է պարսաքարը: Հովհանն Մամիկոնյանն իր «Պատմութիւն Տարօնոյ» գրքի մեջ, խոսելով պարսիկների դեմ Սմբատ Բագրատունու մղած կոհվների մասին, հիշատակում է պարսատիկավորների հատուկ գնդեր, որոնք մեծ քանակությամբ պարսկական զորք են կոտորել:

«Հասեալ յայն տեղի՝ որ կոչի Գողոց աղբեկը, և դարձան ի վերայ նոցա ծիատարքն, և հարին պարսաքարօք և աղեղամբք հինգհարեւը և քսան այր»:<sup>2</sup> Մի ուրիշ տեղ հիշում է՝ «զկնի նե-

<sup>1</sup> Եղիշէ, «Պատմութիւն Վարդանանց», Տիֆլիս, 1904 թ., էջ 12:

<sup>2</sup> Յամիկոն եան եպիսկոպոսի «Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ, 1832, էջ 39 և 48:

տիւք և պարսաքարամբք և գլօք<sup>1</sup> կոտորեցին արս երկու հազար և ութ հարեւր»։ Նույն զենքի մասին հիշատակություն ունի նաև 10-րդ դարի պատմիչ Թովմա Արծրունին,<sup>2</sup> իսկ 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը հիշում է նույնպես պարսաքարերի օգտագործումը կովի ժամանակ։ Խոսելով Բաղաբերդի պաշարման մասին, նա հիշատակում է, որ տեղի բնակիչները թշնամուց պաշտպանվում էին պարսաքարերով և մեծ քարեր գլորելով։<sup>3</sup>

Ուրարտացիները, որոնք անընդհատ պատերազմի մեջ են եղել ժամանակակից ամենաուժեղ պետության՝ Ասորեստանի հետ, իրենց գործածած զենքերի մեջ նույնպես մեծ տեղ են տվել նետին ու աղեղին։ Ուրարտացիների տիրապետության ժամանակի վերաբերյալ մեզ հարուստ նյութեր են տվել դամբարանային պեղումները, որոնց ընթացքում հայտաբերվել են նետի ոսկրե, քարե և մետաղե բաղմաթիվ ծայրեր։ Այդ դարաշրջանի աղեղի ձևի մասին մենք գաղափար ենք կազմում ուրարտական և ասորեստանյան քանդակներից։ Ուրարտական հետեւակը զինված էր նետ ու աղեղով։ Ռազմակառքում եղած երկու մարտիկներից մեկն անպայման զինված էր լինում նետ ու աղեղով, իսկ ուազմակառքի ետևից գնում էին աղեղնավորներ և պարսատիկավորներ։<sup>4</sup>

Պատերազմի աստված Թեյշեբան ուրարտացիների գլխավոր աստվածներից մեկն էր Հանդիսանում, որին նվիրված էր մի այնպիսի խոշոր ամրացված քաղաք, ինչպիսին էր Կարմիր Բլուրի բերդը, որը գտնվում է Երևանից ոչ հեռու։ Այդտեղ ուրարտական ամրոցի պեղումների ժամանակ գտնվել է Թեյշեբա աստծու բրոնզե արձանիկը և հետեւակ ու ուազմասայլի մեջ կանգնած բաղմաթիվ աղեղնավորների քանդակագարդեր։

Ուրարտացիներից հետո Հայաստանում կազմավորվեց Հայ ժողովուրդը, որ շուտով ընկավ Աքիմենյան Պարսկաստանի տիրապետության տակ, քայց իր անկախությունը վերականգնելու համար մի քանի անգամ ապստամբեց Պարսկաստանի Հզոր արքաներից մեկի՝ Դարեհ առաջինի դեմ։ Այդ մասին արձանագրված է Բեհիսթունի ժայռի վրա։ Այս փաստը ցույց է տալիս, որ Հայերը ուազմական տեսակետից 6-րդ դարի վերջին քառորդում մեծ ուժ էին

<sup>1</sup> Գիլ կոչվել են այն մեծ քարերը, որոնք պատերազմի ժամանակ բարձունքներից կամ ժայռերի գլխից գլորում էին թշնամու վրա։

<sup>2</sup> Թ. Ա. Օ ր բ ե լ ե ա ն, էջ 214։

<sup>3</sup> Ա. Օ ր բ ե լ ե ա ն, էջ 36։

<sup>4</sup> Այդպիսի մի տեսարան քանդակված է Բալվատի դռների վրա, որտեղ ուրարտացիները անձնատուր են լինում ասորեստանցիներին։

ներկայացնում, որոնց դեմ Դարեհը ստիպված է լինում մի շարք ճակատամարտեր մղել: Հույն պատմիչներից Քսհնեֆոնը «Վարք Կյուրոսի»— (Կյուրապետիա) աշխատության մեջ տեղեկություն է տալիս, որ մարական տիրապետության ժամանակ Կիաքսար թագավորն իրեն օգնելու համար արմեններից պահանջել և ատացել է թե՛ հետևակ և թե՛ հեծելազոր, որոնք գործ էին ածում նետ ու աղեղ: Նույն պատմիչը հայերի աղեղների մասին դրում է. «Հայերի աղեղները երեք կանգուն են, և նրանց նետերը երկու կանգուն, որոնք անցնում են վահանների և զրահների միջից»:<sup>1</sup>

Ավելի ուշ շրջանի վերաբերյալ՝ հայ պատմագիրներից Մ. Խորենացին, երբ մանրամասն նկարագրում է Հայկի և Բելի կոփվները, հիշում է, որ Բելն իր հետևակ զորքով գալիս է պատերազմելու Հայկի դեմ, իսկ Հայկը հավաքում է իր մոտիկ բարեկամներին և դիմադրում. «արս քաջս և աղեղնաւորս, թուով յոյժ նուազումս»:<sup>2</sup> Հայկը տեսնելով Բելին ամբողջովին զինված զենք ու զրահով՝ իր ուժերը բաժանում է աջ և ձախ թևերի, «զի արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր».<sup>3</sup> ապա պատմագիրը Հայկի մասին ասում է. «Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ, յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ պինդ զլայնալիճն, դիպուցանէ զերեքթեեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր անկանի սլաքն»:<sup>4</sup>

Վերոհիշյալ մեջբերումից արդեն երևում է, որ կովի ժամանակ կարևոր դեր էր խաղում նետ ու աղեղը, որն իր նշանակությունը պահպանում է նաև հետագա դարերում:

Արտաշիսյան դինաստիայի հաստատումից հետո, հատկապես Տիգրան 2-րդի թագավորության ժամանակ, Հայկական բանակը ոչ միայն վերակառուցվում է և քանակապես ավելանում, այլև, շնորհիվ տեղի ունեցած երկարատև կոփվների, ձեռք է բերում ուղմական արվեստի մեծ փորձ և տեխնիկապես է՛լ ավելի առաջադիմում:

Տիգրան 2-րդի հիմնական գործերից մեկն այն եղավ, որ բացի սահմանապահ բղեշխների հաստատումից, փոխեց նաև զորքի բնույթը: «Հետևակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առ հասարակ դիպաղեղունք, և շերտաւորքն ի սուսեր

<sup>1</sup> Ք ս ե ն ո Փ ո ն, Գիրք Դ.:

<sup>2</sup> Մ ո վ ս է ս ի Խ ո ր ե ն ա ց ւ ո յ «Պատմութիւն Հայոց», 1913, էջ 38:

<sup>3</sup> Անդ, էջ 39:

<sup>4</sup> Անդ, էջ 40:

և ի տէդ նիզակի վառեալը, մերկքն վահանօք և զգեստիւք երկաթոյ պարածածկեալք»:<sup>1</sup> Հայերի նետածղության մասին տեղեկություն է տալիս նաև հույն պատմիչներից Դիոն Կասիոսը, երբ նա հիշատակում է Տիգրան Մեծի պատերազմը Լովուլոսի դեմ: Տիգրանակերտի գրավման ժամանակ պատմիչը հիշում է, որ հունական զորքը Արածանին անցնելիս՝ կովի է բռնվում հայ զորքի հետ, շարունակության մեջ նա ավելացնում է, թե Տիգրանը ոչ միայն պարտություն չէր կրել, այլ, ընդհակառակը, ինքն էր ծանր հարված հասցրել հակառակորդին: Տիգրանի հեծելազորը, ինչպես պարզ վկայում է ինքը Դիոնը, որը վնաս չէր կրել թշնամուց, սակայն ետ դառնալով և, հետապնդող հոռմայեցիների վրա նետեր արձակելով՝ նրանցից շատերին սպանել և շատերին էլ վիրավորել էր: Այս կովում ևս Տիգրանը գործադրել էր հատուկ տակտիկա— ոչ թե վճռական մարտի բռնվել, այլ հանկարծակի հարված հասցնել թշնամուն և խույս տալ նրա հարվածներից: Տիգրանի հեծելազորի փախուստը պարզապես կեղծ փախուստ էր, որի միջոցին նետաձիգ արագաշարժ ձիավորները նոր ջարդ էին տալիս թշնամուն:<sup>2</sup> Միաժամանակ նշում է, որ Տիգրանի հեծելազորի փախուստը կեղծ էր, որովհետև հայ նետաձիգները այդ տակտիկան օգտագործելով, իրենց նետերով լավ ջարդ էին տալիս հոռմեական զորքին: Չամշյանը, օգտվելով Դիոն Կասիոսից, Լովուլոսի և Տիգրանի պատերազմների մասին գրում է. «Լուեալ Տիգրանայ՝ թէ առաւ Տիգրանակերտ, արձակեաց փութանակի զհեծելազօրս իւր ի վերա Լուկուղեայ. որոց ի ճանապարհի պատահեալ հեծելոցն հոռվմայեցւոց՝ զորս եղեալ էր Ղուկուղէս, հարին զնոսա շարաշար յոյժ: Իբրև զայն լուաւ Ղուկուղէս՝ որ հեռի էր ի տեղտղէ անտի, զահի հարաւ և շուարեցաւ. և առեալ նոյն ժամայն զվահանաւորս իւր՝ փութացավ հասանել յօգնութիւն նոցա, իսկ հեծելազօրք հայոց՝ փախուստ կեղծելով դարձան յետս: Եւ ի պնդիլ Ղուկուղեայ զկնի նոցա վտանգեցան զօրք նորա առ հասարակ ի շարաշար խոցուածոց նետիցն հայոց. քանզի որպէս գրէ աստ Դիովն— հզօրագոյն էին հեծելազորքն հայոց. և սլաքք նետից նոցա ագուցեալ էին յայլ սլաք սայրասուր անբնեռ. որոց ընդ հարկանիլն ի մարմին՝ եթէ շանցանէին յայնկոյս մնայր ի ներքս մխեալ անբնեռ սլաքն. և ոչ գոյր հնար բժշկութեան. զի չէր կարելի հանել զայն. և զի ան-

<sup>1</sup> Մ. Խ ո ր ե ն ա ց ւ ո յ «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1913, էջ 74:

<sup>2</sup> Ակադ. Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Տիգրան 2-րդ և Հռոմ, Երևան, 1940, էջ 154:

վրէպ դիալեցուցանէին հայք գննետսն, բազումք անկանէին անտի հռովմայեցոց»:<sup>1</sup>

Յ-րդ դարի կեսերին Արևելքում հանդես եկավ Սասանյան Պարսկաստանը, որի հետևանքով Հայաստանի անկախությունն ավելի վտանգվեց: Փ. Բուղանդի պատմությունից երեսում է, որ Տրդատի, Արշակ Բ-ի և Պապի թագավորության ժամանակ մի կողմից ներքին կենտրոնախույս ուժերի, իսկ մյուս կողմից Սասանյան Պարսկաստանի արքա Շապուհ 2-րդի սպառնալիքի և հարվածի տակ Հայաստանին սպառնում էին մեծ աղետներ: Հայպարսկական պատերազմներում հայկական զորքը շատ անգամ հաղթանակել է շնորհիվ իր մարտունակության և տակտիկայի:

Վասակ Մամիկոնյանի մղած կոփվներից մեկում պատմիչը մեկ առ մեկ թվելով հայկական զորքի տեսակները և նրանց խըմբերն ըստ դինվածության, հիշում է նաև շաղեղնաւորք, անվրէպք կորովիք...»:<sup>2</sup>

Հայկական այդ գնդերը, որոնք կրում էին նետ ու աղեղ, մարտին մասնակցում էին ավելի հեռվից, նրանց նետերը, ըստ պատմիչի, խիստ դիպուկ և ուժեղ հարվածող էին. մինչև իսկ նետով նրանք կարողանում էին փղին տապալել՝ «հարկանէր զնետս փղին և անդէն ընկենոյր զփիղն ի վերայ անձին իւրոյ»:<sup>3</sup>

Նետ ու աղեղի ձևի մասին պարզ պատկերացում է տալիս Արշակունյաց դարաշրջանին պատկանող Ախցի հուշարձանը: Այդ հուշարձանը մի փոքրիկ գետնահարկ դամբարան է, որի տանիքը հավասար է գետնին և արևմտյան կողմից ունի մի ցածր մուտք: Հուշարձանն իր կառուցվածքով և քանդակներով տվյալ ժամանակաշրջանի համար եղակի է. ներսից երկու թևերի վրա կան դամբարաններ, որոնց վրա դրված քարապատնեշը զարդարված է խաչի, խաղողի ողկույզների, կենդանիների ու մարդկանց բարձրաբանդակներով: Այդ բարձրաքանդակներից մեկը վերաբերում է որսի տեսարանին. պատկերացված է մի մարդ, որն իր ձեռքին ունի տեղ կամ նիզակ, որով նա հարվածում է վայրի խոզին:

Ինչպես Արշակունիների ժամանակ, այնպես էլ հետագայում, մարզպանական շրջանում, նետածիգները կազմել են առանձին գնդեր, որոնք զինված են եղել միայն նետ ու աղեղներով: Այդ

<sup>1</sup> Զամշյան, հատ. Ա., էջ 235:

<sup>2</sup> Փ. Բուղանդ, «Պատմութիւն Հայոց», էջ 130:

<sup>3</sup> Անդ, էջ 139:

գնդերին մեր պատմիշները անվանել են «մերկեր»։ Այդ «մերկ» զորքին եղիշեն իր պատմության մեջ հիշատակում է, երբ խոսում է Ավարայրի բացառիկ ճակատամարտի մասին։ Նա ասում է, որ նախքան կռիվն սկսելը, պարսկական զորավար Մուշկան Նյուսալավուրտը հատուել մարդկանց միջոցով ստուգում է հակառակորդի (հայերի) ռազմական ուժը, և ըստ այնմ էլ դասավորում է իր զորքը։ «Հարցանէր և ստուգէր՝ թէ քանի այր կայ ի Հայոց աշխարհին ի գնդին Վարդանայ ընդ ամենայն բազմութիւնն։ Իբրև լուաւ ի նմանէ՝ թէ ավելի քան զվաթսուն հազար են, խնդրէր ևս տեղեկութիւն վասն իւրաքանչիւր անձին քաջութեան, և կամ քանի այն ոք իցեն, որ սպառազէնքն իցեն, և կամ քանի այն ոք իցեն որ մերկ՝ առանց զինու աղեղնաւորք իցեն»։<sup>1</sup>

Աղեղնավորներին պատմադիրն անվանում է «մերկեր», որովհետև նրանք զրահավորված չեն, քանի որ ենթակա չեն մոտիկից հարվածելու կամ հարվածներ ստանալու։ Սակայն մեր պատմիշներից տեղեկություն ունենք, որ աղեղնավորները միաժամանակ կրում էին սուր։ Այդ մասին Բուզանդը, Մեհրուժանին և նրա զորքին հալածելու կապակցությամբ, հայտնում է, թե Արտավազդ պատանին հեռվից էր կովում. իսկ հետո, երբ թշնամին մոտենում է, նա առնում է նիզակը և ասկա սուրը. «իսկ նա ընդ գիրկս մտեալ, հարկանէր զայրն նետիւ. և կարանէ ի կարան թափ հանեալ զնետն ցամաք ընկենոյր զնա։ Եւ առեալ զնիզակն զհետ մտեալ փախստէիցն, ընդ սուր հանեալ զզօրսն Մերուժանայ, ավելի քան զամենեսեան Արտավազդ որդի Վաշէին մանուկն կոտորէր»։<sup>2</sup>

Աղեղնավորների գնդերն Ավարայրի ճակատամարտում խոշոր դեր են խաղացել։ Նրանք գտնվում էին բանակի վերջին մասում, որոնց կողքին կովում էին նաև պարսավորաց զնդերը. այդ կովում, ինչպես պատմիշն է նկարագրում, «Ճայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին»։<sup>3</sup> Այնուհետև ավելացնում է. «Անդ էր տեսանել զրեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց»։<sup>4</sup> Իսկ Վահան Մամիկոնյանի կռիվների ժամանակ աղեղնավորների մասին Ռ. Փարպեցին հետևյալն է գրում. «... Բայց Մամիկոնեանն Վահան զամենայն օր ոչ տայր

<sup>1</sup> Եղիշէի «Պատմութիւն Վարդանանց», Տփխիս, 1904 թ., էջ 138—139։

<sup>2</sup> Փ. Բուզանդ, «Պատմութիւն...», էջ 254։

<sup>3</sup> Եղիշէ, «Պատմութիւն...», էջ 170։

<sup>4</sup> Անդ, էջ 172։

դուլ առնուլ զօրօք իւրովք Պարսկաց ի ղակշին, այլ զցայդ ամենայն նետածիդ լինելով ի ներքս՝ էր զոր ինքեանց Հայոց խոցոտեալ նետիւ սպանանէին»:<sup>1</sup> Իսկ մի քանի էջ հետո ավելացնում է. «Եւ առեալ ընդ իւր զարս զօրում իւրոյ և զշինականսն զերիզացիսն՝ դայր հասանէր ի վերայ ղակշին ի գիշերի. և սպարափակ արարեալ երիզացօքն զտեղի կոռույն իւրեանց, և ինքեանք ըստ նմանութեան տեղատարափ շառաշման՝ նետածիդ սաստկութեամբ զգունդս Պարսկացն ահաբեկէին»:<sup>2</sup>

Լրիվ պատկերացում ունենալու համար ավելորդ չի լինի հիւտակել 15-րդ դարի № 1625 ձեռագրից մի նմուշ, որ պատկեւամ է Ավարայրի ճակատամարտից մի տեսարան: Նկարչի այդ պատկերով մենք հնարավորություն ունենք գաղափար կազմելու այդ ժամանակաշրջանի մարտերում գործածվող մի քանի զենքների մասին: Ձեռագիր նկարի մի կողմում կանգնած է պարսկական բանակը՝ պաշտպանված փղերով, իսկ մյուս կողմում փղերին և զորքին նետահարում են հայ աղեղնավորները, որոնք իրենց կողքերին ունեն կապած նաև կապարծ. աղեղնավորները չոքած դիրքով են հարվածում, որպեսզի կարողանան փղին վնասել նրա կաշվի ավելի նուրբ տեղից, փորի մասից:

Հայ պատմիշներից Հովհան Մամիկոնյանը, երբ խոսում է Սմբատի հալածանքների մասին, հիշում է, որ «և հարին պարսարօք և աղեղամբք հինգհարեւը և քսան այր»:<sup>3</sup>

Արաբական տիրասպետության ժամանակի նետ ու աղեղի մասին մենք տեղեկություն ունենք նաև Ղեռնդ պատմիշից. թվելով այդ շրջանում գործադրվող զենքերի բոլոր տեսակները, նա նշում է նաև նետ ու աղեղը, որը համարվել է ինչպես հայ, այնպես էլ արար զինվորների ամենահիմնական զենքերից մեկը: «Արաբացի տարեգիրները կպատմեն, որ հայ աղեղնավորներն արաբացվոց քաջերեն 700 զինվոր սպաններ էին՝ ամենն ալ աշքերնէն զարնելով, ուստի և... գործ կուրութեան անվանեցավ պատերազմին այն մասը»:<sup>4</sup>

10-րդ դարի պատմիշ Թովմա Արծրունին մի քանի անգամ տեղեկություն է տալիս թե՛ արաբական զորականների և թե՛ հայերի

<sup>1</sup> Ղ. Փարպեցւոյ «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 326:

<sup>2</sup> Անդ, էջ 331:

<sup>3</sup> Յ. Մամիկոնիան, էջ 39:

<sup>4</sup> «Բաղմազէլ», 1878, էջ 345:

կողմից այդ զենքի գործածության մասին։ Պատմիչը, երբ նկարագրում է Բուղա զորավարի հարձակումը Նկան ամրոցի վրա, Աշոտ Երկաթի և նախարարների դեմ, մեկ առ մեկ հիշում է զորավարների զրահավորման մասին։

«Զկորովին աղեղնաւորացն և զընտիրս հեծելոց նոցա ընդ ինքեան վառեալ ի ճակատի»։ Այնուհետև մեկ առ մեկ նկարագրում է ուազմիկի ամբողջ զենքերը, որոնցով զինված է նա։ «Եւ ինքեանք արկեալ զրահ զանձամբ, և սաղաւարտ ի գլուխ եղեալ, բաղպանս ի ձեռն արկեալ, զանգապանս ի վերայ բարձիցն պնդեալ, ոդ ոտիցն կօշկածե արուեստաւորեալ, վահան ի թիկունս եղեալ, սուսեր ընդ մէջ ածեալ, նիզակ ի ձեռին ունելով, կապարձս և աղեղունս պատրաստականս զառաջեաւ ի նիւան ունելով...»։<sup>1</sup>

Պատմիչների տվյալներից արդեն երեսում է, որ հայ զորքերը եղել են լավ նետածիդներ։ Հովհաննես Դրասխանակերտցին, որ ականատես է եղել 10-րդ դարի անցքերին, խոսելով Կապույտ բերդի պաշարման մասին, գրում է. — «իսկ մարդիկ ամրոցին անձնընտիր լեալք և կորովութեամբ կշռեալ զձկտումն մեքենայից, և զնետածիդս ի լայնալիճ աղեղանց և զքարինս ի պարսատկաց»։<sup>2</sup> Իսկ Աշոտ 2-րդի կոփվների մասին խոսելիս՝ հատկապես Սևանի ճակատամարտի մասին, հիշում է, որ Աշոտ Բ (Երկաթը) «վաղվաղակի սիատրաստէ նաւս մետասան, և ամբառնայ ի նաւս անդրիբու արս եօթանասուն ազատս և զծառայս իւր լայնալիճ աղեղամբք արս քաջակորովս և հմուտս ի ձգտումն նետածդութեանց, որ գրեթէ ի մազոյ ոչ վրիպէին»։<sup>3</sup> Նույն էջում հեղինակը գրում է, թե ինչպես կովի ժամանակ հայ զորքերը «զոմանս միականիս ի թշնամեացն առնէին, և դայլս բազումս կարեվէր վիրաւորեալ սատակէին»։

11-րդ դարի պատմիչ Ա. Լաստիվերտցին իր Պատմության մեջ, երբ նկարագրում է Բասեն գավառի Ծկում ավանում սելջուկների կողմից կատարված դաժանությունների մասին, մի շարք զենքերի հետ հիշվում է՝ «Եւ ապա լարեալ զաղեղունսն և մերկացուցեալ զգէնսն՝ յարձակեցան ի վերայ շինին, հեշտացեալք իբրև

<sup>1</sup> Թ. Արծրունւոյ «Պատմութիւն տանն Արծրունեաց», 1917 թ., Թիֆլիս, էջ 220—221։

<sup>2</sup> Դրասխանակերտցւոյ «Պատմութիւն հայոց», 1912, Թիֆլիս, էջ 234—235։

<sup>3</sup> Անդ, էջ 356։

յամարայնի, և սուր ի վերաց եղեալ կոտորեցին առհասարակ զամենեսեան ոգիս իբրև երեսուն հազար...»:<sup>1</sup>

Իսկ Արծն քաղաքի ավերածության կապակցությամբ գրում է, թե ինչպես թշնամու սրերի և աղեղների ձայնից դղրդում էր երկիրը. «մտեալ ի ներքս՝ ի փայլուն սուսերացն և ի ձայնէ լարից աղեղանցն, զդողի հարեալ ամենեցուն յերկիւղէն՝ իբրև շղթայիւք կապեալ եղէն»:<sup>2</sup>

Արաբական շրջանի և հետագայի, մինչև մոնղոլական արշավանքների ժամանակներից շատ քիչ թվով են գտնվել նետերի սլաքներ. Մեղ թվում է, որ դա պատահականության արդյունք չէ, այլ այդ մատնանշում է այն հանդամանքը, որ այդ ժամանակներում հայկական զորքը մեծ մասամբ սկսել էր ավելի մոտիկից հարվածող՝ սակրով, նիզակով և սրով կովել: Այդ մասին ակնարկ ունի նաև Ռուսայեցին իր ժամանակագրության մեջ:

Մոնղոլական արշավանքների մասին խոսելիս՝ մեր պատմագիրները հիշատակում են նետ ու աղեղի մասին: Սկզբնական շրջանում հայերը խույս են տվել նետածիգ մոնղոլներից, սակայն հետագայում այնքան լավ նետածիգներ էին դարձել, որ ոչ միայն ետ չէին մնում նրանցից, այլև գերազանցում էին նրանց: «Իսկ յայնմ ժամանակին չէին նաւ մերքն տեսեալ, թուրք զօրք հեծելոց և ի հանդիպելն նոցա տեսին այլակերպ զնոսա, աղեղնաւորս և հերարձակս իբրև զկանայս, և յայնժամ զօրքն Հայոց չէին սովոր պատրաստ լինել ընդդեմ նետիցն... իսկ այլազդիքն նետածգութեամբ զբազումս ի զօրացն Հայոց վիրավորէին խոցելով»:<sup>3</sup>

Հետագայում Հեթում պատմիչը հայ նետածիգներին ուազմական տեսակետից նմանեցնում է մոնղոլներին. «Եւ են հեծեալ և հետեակ քաջ պատերազմողք. զինուք ձիովք և զդեստովք և նմանողք են սովորութեան և ձեռց թաթարաց, որ են ընդ նոցա տէրութեամբ երկար ժամանակէ հետէ»:<sup>4</sup>

Բացի գրավոր աղբյուրներից, բարեբախտաբար, մենք ունենք նետի և աղեղի վերաբերյալ նյութական կուլտուրայի մնացորդներ, որոնք վերաբերում են մեր քննարկած ժամանակաշրջանին: Այդ նյութական հարուստ մնացորդները հայտնաբերվել են միջնադարյան կենտրոններ Անիի և մանավանդ Դվինի պեղումներից,


<sup>1</sup> Խաստի վերացի, «Պատմութիւն...», էջ 118:

<sup>2</sup> Անդ, էջ 127—128:

<sup>3</sup> Ռուսայեցի, «Ժամանակագրություն», Վաղարշապատ, 1898 թ., էջ 44:

<sup>4</sup> Հեթում պատմիչ, Վենետիկ, 1842 թ., էջ 14:


որոնք իրենց մեջ պարունակում են ռազմական գործին վերաբերող գործիքներ և լրացնում են մեր պատմիչների հաղորդած փաստերը, պարզ գաղափար են տալիս զենքերի պատրաստման տեխնիկայի ու ձևի մասին։ Անիի պեղումները պարզել են միջնադարյան Հայաստանի այդ հարուստ քաղաքի պատկերը, բացի այդ, պեղումների ժամանակ հայտնաբերված զենքերը՝ նետ, սուր, դաշույն, նիզակ, սակր և այլն, ծառայել են Անիի ազգաբնակությանն իրու պաշտպանության միջոցներ օտարերկրյա պետությունների դեմ։ Անիի պեղումներից տարբեր տարիներում հայտնաբերված նյութերն իրենց ձևերով բազմազան են, նույնիսկ կան այնպիսիները, որոնք



Նկ. 1. Նետերի երկաթե սլաքներ՝ գտնված Անիում

պահպանել են հնագույն ձևերը և հին տրադիցիաները. 1907 թվի պեղումները կատարվել են Անիի Կարուց դոան մոտերքում, որտեղ մյուս նյութերի հետ միասին գտնվել են երկաթից քառակող պոշուկավոր նետի երկու ծայրեր՝ № 1500—(07 № 102) և 1498 (07 № 72), որոնց մեջ դեռևս պահպանված կան փայտի կոթի մնացորդները. բացի երկաթյա նետերից, հայտնաբերվել են նաև բրոնզե մի քանի նետեր՝ № 1503, 1528, 1543, որոնք պատկանում են

հեթանոսական շրջանին, չնայած այն բանին, որ դրանցից մեկը՝ № 1543 (ՕԵ. № 211), գտնվել է Գագիկի եկեղեցու մոտ, երեսի շերտից։ Հետաքրքրական է նաև այն, որ 1908 թվի պեղումների ժամանակ Միջնաբերդի հյուսիս-արևմտյան կողմում, պալատի պատի մոտ գտնվել է մոտավորապես 500 հատ երկաթից նետեր (ՕԵ № 22 Անիի թանգարանի մատյանից)։ Ակադ. Օրբելին իր աշխատության մեջ այդ նետերի մեծաքանակ կուտակումը պատերի տակ, այն էլ ուղղված պալատի լուսամուտին, բացատրում է նրանով, որ այդ մասում եղել են ուժեղ մարտեր, և այդ թափած



Նկ. 2. Նետերի երկաթե սլաքներ՝ գտնված Դվինում

Նետերն ամենայն հավանականությամբ թշնամու կողմից արձակված նետերը պետք է լինեն։

Միջնադարյան նետերի նմուշներ գտնվել են նաև Հայաստանի հնագույն մայրաքաղաք Դվինում, որտեղ պեղման աշխատանքներն սկսվել են սովետական իշխանության ժամանակ 1937—1939 թվերին Ս. Տեր-Ավետիսյանի ղեկավարությամբ և ապա որոշ ընդհատումից հետո շարունակվել են 1946—1949 թվերին Կ. Ղաֆադարյանի ղեկավարությամբ։ Չնայած այն բանին, որ Դվինում գտնված զենքերի տեսակները բազմաթիվ են, սակայն եղած նիզակների նմուշները ցույց են տալիս, որ այդ երկու կենտրոնների զենքերը նույնն են և նրանք տեղական զինագործ արհեստավորների ձեռքի աշխատանք են։ Անիում գտնված № 1495, 1508, 1520 նետերն

<sup>1</sup> Акад. И. А. Орбели, Каталог Анийского музея древностей, выпуск I, 1910 г., С.-П. стр. 95.

իրենց ձևով նման են Դվինի № 1794/84, 1848/4, 1848/3 նետերին. այս նմանություններն արդեն գալիս են հաստատելու, որ միջնադարյան առևտրա-արհեստավորական կենտրոնները ինչպես կերամիկայի և մյուս իրերի, այնպիս էլ զինագործության ասպարեզում գործադրել են միևնույն տեխնիկան, շատ քիչ առանձնահատկություններով:

Բացի պեղումներից դուրս եկած նետերը, կարեռագույն վավերականներ են հանդիսանում միջնադարից մեզ հասած երկու բարձրաքանդակներ քարի և մի փորագրություն փայտի վրա: Դրանցից մեկն Ամիր Հասանի բարձրաքանդակն է՝ փորագրված քարի երեք կտորների վրա: Առաջին քարի վրա քանդակված է 14-րդ դարի իշխան Ամիր Հասանը ձիու վրա՝ լարված աղեղով, երկրորդ քարի վրա ցույց է տրված նետի ձևը, իսկ երրորդի վրա փորագրված է որսի կենդանին՝ նետը խրված պարանոցի մեջ: Արժեքավոր քանդակներից է նաև Անգեղակոթում գտնված պարոն Ավագի մահարձանը, որտեղ պատկերացվում է որսի տեսարան, այդտեղ իշխանն իր աղեղով սպանում է եղջերուն: Սակայն այստեղ անհրաժեշտ է նշել, որ այդ կոթողների վրա քանդակված աղեղների ձևի մեջ նկատվում է որոշ տարբերություն, այն է, որ Ամիր Հասանի աղեղն անկյունավոր է, իսկ նույն դարին պատկանող Անգեղակոթի՝ պարոն Ավագի մահարձանի վրա քանդակված աղեղն ավելի կլոր ձև ունի:

Այս երկու քանդակները մեզ լրիվ գաղափար են տալիս միջնադարյան ռազմիկների գործածած աղեղի ձևի մասին և մասամբ լրացնում են այն բացը, որ պեղածո իրերի մեջ իսպառ բացակայում է աղեղը:

**Նիզակ, տեք և գեղարդ.**— Նիզակը եղել է հայկական զորքի ամենագործածական զենքի տեսակներից մեկը և կազմված է երկու մասից. վերին հարվածող սրածայր մասը, որ կոչվում է գեղարդ, բուն զենքն է և երկրորդ մասը նիզակի երկար կոթն է, որ նաև նիզակարուն է կոչվում, մեծ մասամբ լինում է թթվագույնից կամ եղեղնից: Այդ զենքի մասին խոսելիս անհրաժեշտ է հիշատակել նաև կարճ նիզակը, որ մեր պատմիչների մոտ հաճախ կոչվել է աշտեն-մկունդ: Այս զենքերի միջև տարբերությունը շատ շնչին է, որովհետեւ բոլորն էլ կատարում էին միևնույն դերը, միայն այն տարբերությամբ, որ կարճ նիզակները զինվորներն իրենց հետ տանում էին գործադրելու հեռավոր մարտերում, իսկ երկար նիզակները՝ մոտակա մարտերի ժամանակ: Հնում նիզակը կա-

տարել է նաև խորհրդանիշի դեր նոր թագավորի թագաղբության ժամանակ, հաճախ, որպես պատիվ, նրան նվիրում էին նիզակ: Նիզակը հանդիսացել է նաև պատերազմի խորհրդանիշ. հռոմայիցիների, ինչպես և հայերի մեջ պատերազմ հայտարարելիս թշնամու սահմանագիծն էին նետում նիզակներ՝ ի նշան պատերազմի: Ուրարտացիների մոտ ունեցել է նաև կրոնական իմաստ: Այսպես, օրինակ, Մուսասիրի տաճարի մուտքի երկու կողմերում, ինչպես այդ տեսնում ենք Բալավաթի դռների վրայի քանդակների մեջ, դրված էին նիզակներ:

Քրիստոնեության մեջ ևս Քրիստոսի իբր թե կողը խրած գեղարդը մեծ սրբություն է համարվել և պաշտվել Գեղարդավանքում, որ իր անունը, ինչպես տեսնում ենք, ստացել է այդ գեղարդից:

Ոչ միայն միջնադարյան Հայաստանում, այլև տոհմատիրական կարգերի ժամանակ, նիզակը հանդիսացել է կարևորագույն զենքերից մեկը, և կատարել է թե՛ զենքի և թե՛ գործիքի դեր: Հնագիտական պեղումներից դուրս են եկել բազմաթիվ նիզակածայրեր, որոնց կոթերը, փայտից պատրաստված լինելու պատճառվ, փուլ են և մեզ չեն հասել: Նիզակները լինում են դաշույնածե նեղ, կամ տերեւածե, ավելի լայն. շեղբի ամբողջ երկարությամբ կենտրոնում ձգվում է ուռուցիկ ջիղ:

Կարճ նիզակներն էլ են գործածվել շատ հին ժամանակներում. այդ մասին մեզ տեղեկություն է տալիս հույն պատմիչներից Քսենեֆոնը, այդ երկում է նաև Թոփրաղկալայի պեղումներից հանված փոքր և մեծ նիզակների մնացորդներից: Սարգոնի կողոպուտի մեջ հիշվում է 1914 պղնձե նիզակ:

Եթե հնագույն շրջանի վերաբերյալ հարուստ տեղեկություններ մենք ստանում ենք պեղումներից, ապա միջնադարին վերաբերող բավականին առատ փաստեր են տալիս մեզ հայ պատմիչները՝ նամանավանդ նիզակի գործածության մասին:

Խորենացին պատմելով Տիգրան Մեծի բանակի վերակազմավորման մասին, հիշատակում է ոչ միայն պարսավորների դրապուկ աղեղնավորներ դառնալու և կամ հետեւակի հեծյալ դառնալու մասին, այլև հիշում է՝


«Ծերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք... Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցացն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք, զթշնամիսն արտա-

Հալածելու<sup>1</sup> նույն պատմագիրը գովելով Տիգրանին, գրում է. «Բայց գովեմ զքաջահասակն զիմ և զնիզակաւորն (Տիգրան)… ի դինել պատերազմին, նիզակաւ որպէս զջուր հերձեալ զերկաթի ամուր հանդերձն, շամփրէ զԱշդահակ յընդարձակ տէգ նիզակին, և յամփոփիել միւսանգամ զձեռն՝ արտաքս զկէս մասն թոքիցն հանդերձ զինաւն ի դուրս բերէ»<sup>2</sup>

Վերոհիշյալ հատվածում պատմագիրը հիշատակում է նիզակը ոչ միայն որպես զենք, այլև նրա կատարած դերը, համեմատելով սրի հետ, այն իմաստով, որ ինչպես սուրը երկաթ էր կտրում, այնպես էլ նիզակը խրելիս անցնում էր հագուստի զրահի միջից:

Արշակունիների տիրապետության օրով հայկական բանակը բավականին հզոր էր և թվով ավելի շատ, քան հետագա ժամանակներում։ Արշակ Բ-ի օրով Վասակ սպառապետի առաջին գործն այն եղավ, որ նա կազմակերպեց ուժեղ բանակ։ Այդ բանակում իրենց ծանրակշիռ տեղն էին բռնում նիզակավորները, որոնք կովի էին գնում թե՛ հետիոտն և թե՛ հեծյալ։ Նիզակավորները զինված էին զրահներով, որոնց համար պաշտպանության ամենակարևոր միջոցը վահանն էր։ Փակստոս Բուզանդը խոսելով Արշակ 2-րդի և Շապուհ 2-րդի կոհիվների մասին, նկարագրում է հոռմեական և հայկական բանակների դասավորությունն ու սպառազինությունը։ «Եւ իեգէոն զօրում բազմութիւն, այս ինքն Յունաց զօրացն սպառակիրն, սոյնպէս և Հայոց սպառակիրն զթիկունս ունէր զօրացն Հայոց, վահանօք փակեալք զինքեամբք՝ իբրև զամուր քաղաք… Յորժամ տարածանէին ինչ զօրքն Պարսից, զզօրսն Յունաց կամ զդունդ նիզակաւորացն Հա-

Նկ. 3։ Նիզակի ծայր՝  
գտնված Դվինում



<sup>1</sup>Մ. Խ ո ր ե ն ա ց ւ ո յ «Պատմութիւն Հայոց», էջ 74։

<sup>2</sup>Անդ, էջ 83—84։

յոց, ի և դէռն վահանաւորացն Յումաց կամ ի սպարակիրն Հայոց իբրև ի բերդ մտեալ հանգչէին»:<sup>1</sup> Ապա խոսելով Վասակի սպառազինության մասին, դրում է. «Եւ մինչդեռ գայր նա ընդ բանակամէջն, և էր հեծեալ յերիվարին իւրում, իբրև մերձ եղև ի հրապարակն արքունի, և անդ ի յարքունուստ հասանէին բազում սպասաւորք վառեալք սուսերաւորք, նիզակաւորք, վաղրաւորք, սակրաւորք, սուխնաւորք՝ և սպարակիրք հետևակիք»:<sup>2</sup> Հետո ավելացնում է, որ Վասակը «վաղվաղակի կատարէր զհրամանս թագաւորին, շորեք-հարիւր հազար զօր կուռ վառեալք, որ ընտիրք և պատերազմողք էին, լի արութեամբ արուեստաց նահատակութեանն: Նիզակաւորք, սուսերաւորք...»:<sup>3</sup>

Վերոհիշյալ նկարագրությունից երևում է, որ նիզակավորները կովի դաշտում գտնվել են առաջին շարքում. «Զի յորժամ Հայոց նիզակաւորքն առաջի կարգէին, այսպէս յարձակէին որպէս զլեառն մի բարձր և կամ որպէս զաշտարակ մի հաստաբեստ հզօր և անշարժ»:<sup>4</sup> Բուզանդի պատմությունից երևում է, որ Պատթագավորի ժամանակ Գանձակում և Ատրպատականում մնացել էր 30.000 սահմանապահ զորք՝ «Ընտիր ընտիրք, նիզակաւորք կուռ վառեալք սկատեղէնք և զրահաւորք կազմ ամենայնիւ:»<sup>5</sup> Այնուհետև Բուզանդը հիշում է, որ Մուշեղ սպարապետը գումարեց «զամենայն զօրսն Հայոց ավելի ևս քան զընսուն հազար, և կազմէին պատրաստութեամբ»:<sup>6</sup>

Ավարայրի ճակատամարտում պարզ դրսեորված է ուազմիկների դասավորումը տակտիկական տեսակետից: Այդ ահավոր մարտում, որտեղ հայ ժողովուրդը ցուցաբերել է իր հերոսությունը, անձնազոհությունը, ինչպես պատմիչն է նկարագրում, ոչ միայն «...ճայթուն լարից աղեղացն խլացուցանէին այլև ի ճոճել բազմախուռն նիզակացն իբրև երկնուստ ահագին հրածգութիւնք եռացին»: Իսկ երբ հեղինակը նկարագրում է մարտից հետո եղած սրտաճմլիկ տեսարանը, ասում է՝ «Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զիսորտակումն աղեղանց»:<sup>7</sup>

<sup>1</sup> Փ. Բ ու դ ա ն դ, «Պատմութիւն Հայոց», էջ 201:

<sup>2</sup> Անդ, էջ 118:

<sup>3</sup> Անդ, էջ 130:

<sup>4</sup> Անդ, էջ 202:

<sup>5</sup> Անդ, էջ 203:

<sup>6</sup> Անդ, էջ 192:

<sup>7</sup> Եղիշէ ի «Պատմութիւն Վարդանանց», 1904, Տփխիս, էջ 172:

Այնուհետև պատմիշը բազմիցս հիշատակում է նիղակի և որիշ զենքերի մասին: Նիղակների և տեղերի ծայրերը, ինչպես նաև նետերի սլաքները հաճախ թունավորում էին, որով վերքը դառնում էր անբուժելի:

Նիղակը որպես մարտական զենք իր դերը պահպանել է նաև Բագրատունիների օրով և հետագա ժամանակներում, գրեթե անփոփոխ պահելով իր ձևը: 10-րդ դարի պատմիշ թովմա Արծրունին մի շարք անգամ հիշում է նիղակի մասին, մանավանդ երբ խոսում է նա Խոթ լեռան բնակչության հերոսական ելույթի մասին. «և են ստացեալ զէնս աշտեալս հանապաղ կրելով ընդ ինքեանս»:<sup>1</sup>

Բացի վերոհիշյալ գրավոր նյութերից, միջնադարյան հնագայրերի պեղումներից դուրս են եկել մի քանի նիղակներ, որոնցից անհրաժեշտ եմ համարում այստեղ հիշատակել Դվինի և Անիի պեղումներից ստացվածները. դրանք իրենց ձևով յուրահատուկ են: Դվինի նիղակը գտնվել է միջնաբերդում 1946 թվի պեղումների ժամանակ. իր ձևով նա նման չէ մյուսներին, բացի խոցելու հարմարությունից կողքից ունի կեռ հավելված, որ պատրաստված է իր զոհին ձիու կամ պատի վրայից ցած քաշելու համար: Նույն ձևի նիղակ հայտնաբերվել է նաև Անիի պեղումների ժամանակ՝ № 1546 (08 № 50): Այս նիղակը գտնվել է պալատի բաղիլիկ դահլիճի նկուղային մասում, նիղակի երկարությունը 28 սանտիմետր է և ունի երեք վերջավորություն, որոնցից մեկը երկար է և ուղիղ, որը պատրաստված է զոհին ծակելու համար, իսկ երկու ծայրերը թեքված են մի ուղղությամբ, կեռ ձևով, որպեսզի մարտիկը կարողանա իր թշնամուն ձիուց կամ պատից ցած քաշել: Այս նիղակը մեխով ամրացված է փայտի, իսկ կոթի վրա երևում են անցքեր, որոնք պատրաստված են եղել դամերով ամրացնելու համար:


Մանրանկարչության մեջ և քանդակների վրա ունենք նիղակների բազմաթիվ պատկերներ, որոնց միջոցով հնարավոր է լինում լրացուցիչ գաղափար կազմել միջնադարյան նիղակի ձևի և գործածության եղանակի մասին:

Չեռքին երկար նիղակ բռնած հայ զինվորի պատկերը մենք տեսնում ենք հոռմեական Ծկտավիանոս կայսեր ժամանակ, որն իր գրամի մի երեսին պատկերել է հայ զինվոր՝ աջ ձեռքին բըռ-

<sup>1</sup> Թ. Արծրունի, «Պատմութիւն տանն Արծրունեց», էջ 203:

նած երկար նիղակ, իսկ ձախ ձեռքին կախված դրությամբ պահել է աղեղը:

15-րդ դարի մի ձեռագրում նկարիչը տվել է արաբների դեմ Մուշեղ Մամիկոնյանի ազստամբության մի դրվագ, որտեղ զորքի առաջից գնում է զորավարը, ձեռքին մերկացած սուր, իսկ նրա ետևից շարժվում են մի խումբ հեծյալ նիղակավորներ, որոնք բռնած ունեն խոցող և հարվածող երկար նիղակներ։ Զորքն



Նկ. 4: Տեղի և նիղակի երկաթի ծայրեր՝ գտնված Դվինում

իր հետ տանում է նաև դրոշակ ու խաչ. բանակի բարոյական վիճակը բարձրացնելու և քաջալերելու համար իրենց հետ էին վերցնում հոգևորականներին։

Մեր պատմիչների մոտ շատ հաճախ տեղի փոխարեն գործ է ածված աշտեն անունը։ Այդ անվանը մենք հանդիպում ենք Հովհան Մամիկոնյանի մոտ, երբ նա խոսում է Գայլ Վահանի մասին։— «Եւ ինքն առեալ զզօրս իւր արս եւթի հարեւը, եկն ի Մուշն աւան.

և երեքհարեւր այր թողեալ յանցս Մեղուայ, և երկու հարեւր այր աշտենաւոր թողեալ ի Սանասայ ի Շծմակն (ծմակ)»:<sup>1</sup>

Նույն պատմիչը նշում է, թե ինչպես «զտէդն», եհար զկուրծս նորա. և ցցեալ, ի ներքս ոչ կարաց անցուցանել:... Եւ բախեալ տիգաւ ի թիկունս նորա, և անց ընդ զրահսն ի ներքս, և էհան ընդ սիրտ նորա»:<sup>2</sup> Պատմիչը նկարագրում է տեղի հարվածի ուժգնությունը և հարվածողի ճարպկությունը: «Եւ բախեալ զտէդն ի վերայ պարսկին թիկանն, և անդէն եհան ընդ ողն երիվարին. և այլ ոչ ժամանեաց հանել զտէդն: Զոր ծաղր արարեալ, ասէր, երթ շափեա զտէդդ՝ թէ քանի կանգուն է. մի ոք սուտ ասէ՝ թէ երեք գիրկ է և խարէ զքեզ»:<sup>3</sup>

Մուշի 11-րդ դարի ձեռագրերից մեկում նկարիչը պատկերում է Քրիստոսի խաչելությունը. այդ նկարում կանգնած պահակներն իրենց ձեռքին բռնած ունեն նիզակներ և տեղեր: Հետաքըրք-րական է նաև 1437 թվի ձեռագիր նկարը: Նկարիչը՝ Աստվածատուր, տալիս է Հիսուսի մատնության պատկերը. զինվորներն իրենց ձեռքում բռնած ունեն սակրեր, նիզակներ և ուրիշ զենքեր: Մուշի 1294 թվի № 1010 ձեռագրում նկարված է Քրիստոսի հարությունը, որտեղ կանգնած են նիզակներով զինված 6 մարդիկ: Վանի 1411 թվի № 6291 ձեռագրում կա Քրիստոսի մատնության տեսարանը, որտեղ զինվորները ձեռքներին բռնած ունեն նիզակներ և սակրածե զենքեր և այլն:

Չնայած այն հանգամանքին, որ վերոհիշյալ բոլոր նկարները կրոնական բնույթ են կրում,— սակայն հետաքրքրական են նրանով, որ հայ նկարիչները նկարելով հին հոռմեական զինվորներին, որոնց մասին գաղափար անգամ շեն ունեցել, պատկերել են իրենց ժամանակաշրջանի զինվորներին տեղական սովորական զենքերով, որոնք վկայվում են նաև պեղումների տված նյութերով:

Նիզակի և նետի միջին օղակն է հանդիսանում տեղը կամ աշտեն, որն ունի նիզակի ձև, բայց ավելի փոքր է և կորն էլ զգալի շափով կարճ: Տեղը կամ աշտեն ծառայել է հեռվից ձեռքով նետելու, առանց որևէ գործիքի: Կոթը լինում է փայտից կամ եղեգից, իսկ ծայրը՝ շատ հնում բրոնզից, իսկ միջին դարերում՝ երկաթից:

<sup>1</sup> Յ. Մամիկոնեան, «Պատմութիւն Տարօնոյ», ի Վենետիկ, 1832, էջ 23:

<sup>2</sup> Անդ, էջ 35:

<sup>3</sup> Անդ, էջ 41:

Լաստիվերտցին գրում է. «Եւ զանհնարին շարիսն՝ զոր անդ գործեցին, թողին յիշատակ ազգաց յազգս, զի զտղայսն և զայլ ապաժամեանսն նշաւակ եղեալ, աշտէիւք և նետիւք խաղալով, շարաշար խոցոտելով՝ սատակէին, և ոչ կաթէր ի բնութիւն նոցա գութ ողորմութեան»:<sup>1</sup>

Կաղանկատուացին նիզակ անվան զուգընթաց հիշատակում է մկունդը, որ ըստ իս, ծանր նիզակն է, որովհետև Յովհաննու Ոսկերերանի մեկնութիւն Եպայայ... ի մեջ ասված է. «Չուլեսցին զառանք իւրեանց ի խոփս և զմունդս իւրեանց մանկադս». մկունդով զինված զորքերը կոչվել են մկնդավոր կամ մականդաւոր: Կաղանկատուացին ունի «թանձր և ստուար մկնդակօք»: Խոցելու նույն նպատակին է ծառայել նաև սվինը, որը նույնպես հին զենք է և հիշատակված է իբրև աստվածաշնչի թարգմանության, նույնպես էլ Խորենացու պատմության մեջ: Կային սվինավորներ, իբրև առանձին զորական խմբի պատկանողներ:

Հետաքրքիր է, որ միջին դարերում իսպառ վերանում են եղիտանի և եռաժանի խոցելու նիզակածել զենքերը, թեև նրանց նկարը հանդիպում է 16-րդ դարի ձեռագրերի մանրանկարների մեջ օտար զինվորների ձեռքին:

Դաշույն.— Հայկական զորքի կարևորագույն և շատ զործածական զենքերից է նաև դաշույնը, որի մարտական նշանակությունն է՝ մոտիկից հարվածել և խողխողել թշնամուն: Այս զենքը գործ էին ածում թե՛ հեծելազորը և թե՛ հետևակը, սակայն դաշույն կրում էր դիխավորապես հետևակ զորքը:

Հայաստանում գտնված դաշույնները մեծ մասամբ երկսայրի են, թեև եղել են նաև կեռ դաշույններ, որոնք հանդես են գալիս արդեն 7-րդ դարից հետո Դվինի և Անիի պեղումների մեջ:

Դաշույնի գործածությունը շատ հին է. այդ են ապացուցում Հայկական բարձրավանդակի տարրեր վայրերից դուրս եկած հնագիտական նյութերը. հնագույն ժամանակներում սուր գրեթե չկա, և եղածն էլ միայն մեծությամբ է տարրերվում դաշույնից, իսկ ավելի ուշ, մ.թ. առաջ առաջին հաղարամյակի սկզբներին և կեսերին, կան միանգամայն յուրահատուկ սրեր, որոնք իրենց ձեռվ բավականին տարրեր են դաշույններից և հարմարեցրած են ավելի ուժեղ հարվածի ու խոցման: Պեղումներից դուրս եկած առարկաների մեջ խոշոր տեղ են բռնում դաշույնները, որոնք շին-

<sup>1</sup> Լաստիվերտցի, «Պատմութիւն Հայոց», էջ 139:

վում էին թե՝ բրոնզից և թե՝ երկաթից՝ տարբեր ձևի ու չափի: Մենք ավելորդ ենք համարում մանրամասն կանգ առնել հնադարյան դաշույնների ձևի նկարագրման վրա, քանի որ դա մեր նպատակից դուրս է, միայն կասենք, որ պեղումներից դուրս եկած բրոնզյա դաշույններն անհամեմատ ավելի լավ են պահպանվել, քան երկաթյա դաշույնները, որոնք ավելի շուտ են քայքայվել ժանգի հետևանքով:

Դաշույններն ունենում էին պատյաններ, որոնք պատրաստվում էին բրոնզից կամ փայտից և ծածկում կաշիով, իսկ շատ դեպքերում էլ պատյանի կողերն ամրացվում էին բրոնզե թերթիկներ: Հին դաշույնների վրա շկան կողքից կախելու հարմարություններ, ըստ երևույթին դաշույնն ուղղակի խրել են գոտումեջ:

**Թուր, սուր, սուսեր, սվին.**— Բացի դաշույնի տարբեր տեսակներից, խոցելու և հատելու ղենքերի երեք հիմնական տեսակներն էլ օգտագործվել են հին Հայաստանում և միջին դարերում: Դրանցից մեկը և ամենատարածվածը դաշույնի ձևի երկսալրի սուրն է, որ մեծ մասամբ լայն շեղբով երկար ու ուղղաձիգ սուր է, որն իր կենտրոնում ունենում է ակոսներ: Այս սրով կարելի է խոցել, գործածելով միայն սուր ծայրը, կարելի է նաև երկու սայրերն էլ օգտագործել հատելու և հարվածելու համար: Երկրորդ տեսակը քուրն է, որի միայն ծայրը և սայրերից մեկը կարելի է գործածել, որովհետև մյուս կողմը սովորաբար բութ է լինում և թրին տալիս է անհրաժեշտ ծանրություն: Թուրը սովորաբար որոշ շափով կեռ է լինում՝ սուր բերանով հատելու թափն ավելի ուժեղացնելու նպատակով: Այս տեսակի թրեր հին դարերում գտնված շկան, իսկ միջին դարերում էլ գործ են ածել հավանաբար միայն հեծյալները: Երրորդ տեսակը սուսերն է, որ թեև թրի նման բըռնատեղ ունի և պատյան, բայց ծառայել է միայն խոցելու համար: Դրա մի հազվագյուտ բրոնզյա օրինակը գտնված ունենք Չորագեսի կառուցման ժամանակ բացված մի դամբարանի միջից, որը պատկանում է մեր թվականությունից առաջ առաջին հազարամյակի սկզբներին և ունի մոտ մեկ մետր երկարություն (միայն շեղբը 91 սանտիմետր է):

Սուսերին խիստ մոտիկ է իր էռվյամբ սվինը, որը սակալն, դաշույնի կամ սուսերի նման երկսալրի մի զենք է, բայց զգալի շափով նրանցից կարճ և նիզակի նման ագուցած է լինում փայտե կոթի վրա: Սվինով մոտիկից խոցում էին թշնամուն: Սվինի

ծայրերը շատ դեպքերում դժվար է տարբերել նիզակի և տեղի ծայրից, որոնցից նա մեծ մասամբ տարբերվել է միայն իր գործածության ձևով: Սակայն նկատի ունենալով տարբեր ժամանակներում գտնված հնագիտական մնացորդները և պատմագիրների միանգամայն ուշագրավ հիշատակությունները (Խորենացի, Գիրք պիտոյից), պետք է ենթադրենք, որ զորքի մի հատուկ տեսակը զինված է եղել գլխավորապես սվիններով և կոչվել է սվինավոր:

Հայաստանում գտնված բրոնզե սրերի շեղբը լայն է և սուր ծայրը կլորավուն ձև ունի: Երկարությունը տարբեր է լինում, մինչև մեկ մետր:

Լոռու, Նոր Բայազետի և Դիլիջանի շրջաններից հայտնաբերվել են նաև երկաթե սրեր, որոնք բրոնզե սրերի համեմատու-



#### Նկ. 5. Սուր, գտնված Անիում

թյամբ ավելի երկար են: Միանգամայն հետաքրքրական օրինակ է Հացումու «Պատմություն Հին Հայ տարագին» աշխատության մեջ բերված՝ ուրարտական շրջանին պատկանող № 5 ձևի քանդակը, ուր նկարված է ուրարտացիների կոիվն ընդդեմ Ասորեստանի: Այդտեղ հարձակվող զինվորներից երկուակի ձախ կողքին նկատվում է սուր, որ կախված է ուսից իջնող փոկով, շատ նման է ասորեստանցիների սրին: Բացի այդ, սուրը հիշվում է նաև Սարգոնի ավարի մեջ:

Հին հեղինակները շարունակ շփոթում են սուր, սվին, բուր, սուսեր բառերը: Այդ շփոթությունը կարող է երկու պատճառով բացատրվել. նախ՝ այդ անունները ժամանակի ընթացքում կարող են փոխել իրենց իմաստը և կամ պատմագիրներն իրենք զինվորական շինելով հանդերձ (նրանք գրեթե առանց բացառության հոգևորականներ են) կարող էին զենքերի ճիշտ անունները շփոթենալ և իրար նման զենքերը շարունակ շփոթել միմյանց հետ:

Արտաշիսյան դինաստիայի օրով, հատկապես Տիգրան Բ-ի թագավորության ժամանակ, հիմնովին վերակառուցվում է հայկական զորքը։ Մովսես Խորենացին հաղորդում է. «շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք»։<sup>1</sup> Ինչ խոսք, որ այդ կոփվներում սուսերը, սուրն ու դաշույնը հանդիսացել են կարևոր մարտական դենքեր։

Արշակունիների հարստության վերջին շրջանում Հայաստանն անընդհատ կույի մեջ էր իր հարեան Սասանյան Պարսկաստանի հետ։

Ժամանակակից պատմիչ Փ. Բուզանդը Շապուհ 2-րդի դեմ հայկական բանակի մղած մարտերի կապակցությամբ խոսելիս՝ հիշատակում է սուսերավորների գնդերի մասին։ Վասակը, կատարելով Արշակ Բ-ի հրամանը, թվում է «շորեք հարիւր հաղար» զորքի զրահավորման և զինման մասին, որտեղ նիզակավորների և աղեղնավորների կողքին հիշատակվում են նաև «սուսերաւորք, անվրէպք կորովիք»։<sup>2</sup>

Սասանյան շրջանի վերաբերյալ կան բավականին հարուստ նյութական մնացորդներ, որոնք մեզ հնարավորություն են տալիս որոշ դաղակիար կազմելու այդ ժամանակվա սուսերի, սրի և զաշույնի ձեերից մասին։ Թագավորների չ իշխանների անմիջական գործածության համար զենքերը պատրաստում էին նաև ոսկուց ու արծաթից և զարդարում թանկագին քարերով. այդպիսի զենքեր պատրաստում էին հատուկ պատվերով և այնպիսի արհեստավորների ձեռքով, որոնք աշխատում էին արքունիքին կամ զզյակներին կից, միայն իրենց ֆեոդալ իշխանների կարիքների համար։ Բուզանդը ներսես Մեծի մասին գրում է.

«... զարքունական սուսերն զպողովատիկն զոսկէպատեանն հանդերձ ականակապ մարդարտաղարդ կամարաւն ի սպասունորա բարձեալ ունէր»։<sup>3</sup> Ինչպիս տեսնում ենք, միջնադարյան Եվրոպայից շատ առաջ, Հայաստանում իշխանները թանգարժեք սուսեր էին ունենում իրենց «կյանքն ու պատիվը» պահպանելու համար։ Մեր պատմիչների մոտ կան բազմաթիվ հիշատակություններ ոսկիներով և թանգարժեք քարերով զարդարված սուսերների ու դաշույնների մասին, որոնք, անշուշտ, գործ էին ածվել տիրող դասի ներկայացուցիչների կողմից։

<sup>1</sup> Մ. Խորենացւոյ «Պատմութիւն հայոց», էջ 74։

<sup>2</sup> Փ. Բուզանդ, «Պատմութիւն հայոց», էջ 130։

<sup>3</sup> Անդ, էջ 69։

Մի քարե քանդակ կա գտնված Զվարթնոցի ավերակների մեջ, որը պատկանել է Զվարթնոցից առաջ կառուցված 4—5-րդ դարերի շենքերին։ Այդ բարձրաքանդակի վրա պատկերացվող մարդու զգեստի առջևի մասը շրջանաձև է ու երկար, ձեռքին բռնած ունի սուր։ Այս հանդամանքը ցույց է տալիս հագուստի այդ ձևի և զենքերի գործածական լինելը 4—5-րդ դարերում։ Արթիկի շրջանում ևս հայտաբերվել է նույն ժամանակին պատկանող նման ձևի մի բարձրաքանդակ։

Փ. Բուզանդի պատմությունից երևոմ է, որ հայ զինվորականը կարող էր զինված լինել միաժամանակ սուսերով և թրով։ Երբ Պապ Յաղավորը հրամայում է հազցնել Դղակ Մարդպետին ինչ որ անհրաժեշտ է, Բուզանդը գրում է. «Եւ ագուցեալ զպատմուճանն մեծ, էած զգոտին ընդ մէջ իւր՝ զորմէ թուրն կախէր. և սուսեր ընդ մէջ ածեալ, և խոշը ի գոտւոյ դրատիցն իջեալ, զթուրն և զսուսերն ծածկէր»։<sup>1</sup>

Հացունին հենվելով այս քաղվածքի վրա, հանգել է ոչ ճիշտ եղբակացության, հետևեցնելով, թե պատմիչի հիշատակված թուրն ավելի կարճ պետք է եղած լինի, քան սուսերը։

5-րդ դարի պատմիչ Եղիշեն շատ վառ գույներով է արտահայտվում 451 թ. հերոսական կովի մասին։ Նա գրում է.

«Եւ ամբոխ աղաղակին երկոցունց կողմանց՝ իրրև ի մէջ ամպոց շփոթելոց՝ ճայթմունս գործէր, և հնչումն ճայնից զքարանձաւ լերանցն շարժէր։ Ի բազմութենէ սաղավարտիցն և ի փայլիւն պատենազէն վառելոցն իրրև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին։ Նա և ի բազում սուսերացն շողալ, և ի ճօճել բազմախուն նիզակացն իրրև յերկնուատ ահագին հրաձգութիւնք եռային»։<sup>2</sup>

Զենոր Գլակը հիշատակում է մեծ թվով սուսերավորներ, որոնք գնում են կովի։ «Իսկ մեր ի վարանս մտեալ, յղեցաք գիշերագնաց զոմն առ իշխանն Անգեղ տան, և թղթով ծանուցաք զիրսն։ Իսկ նորա չորեք հազար արանց ընտիր սուսերաւորաց առաքեաց, որք ի վաղիւն եկեալ անցին յայնկոյս գետոյն»։<sup>3</sup>

15-րդ դարին պատկանող Մատենադարանի № 1625 ձեռագրում ծաղկող կարապետը ցույց է տվել Ավարայրի ճակատա-

<sup>1</sup> Փ. Բուզանդ, «Պատմութիւն Հայոց», էջ 204։

<sup>2</sup> Եղիշեն, «Պատմութիւն Վարդանանց», էջ 169—170։

<sup>3</sup> Զենորայ Գլակա ասորւոյ եպիսկոպոսի «Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ, 1832, էջ 26։

մարտից մի դրվագ, որտեղ պարզ երևում է աջ կողմում սուսերավոր հեծելազորը, որի առջևից գնում է զինված հեծյալ զորավարը, որի ձին նույնպես զրահավորված է։ Այս ձեռագիրը արժեքավոր է թեկուղ հենց այն տեսակետից, որ մեզ մոտավոր պատկեր է տալիս Ավարայրի ճակատամարտում կոված սուսերավոր գնդերի մասին 15-րդ դարի հասկացողությամբ։

Սուսերի ամենալավ և ամուր տեսակը հայ պատմագիրները կոշում են սուսեր պողովատիկ։

Երբ Սեբեոսը բերում է Վահրամի գրած նամակը Մուշեղ Մամիկոնյանին, հիշում է պողովատիկի և սլաքների մասին. «... այլ վաղիւ, քանզի լինի առ Սասանայ, ցուցանեմ ձեզ փիղս վառս, և ի վերայ՝ զաւրս սպառազինեալս քաշաց, որ տեղասցեն ի վերայ ձեր նետս երկաթեղէնս ձերբաձութեամբ, և շառաւունս (շառառունս) մուխս պողովատիկս՝ սլաքաւք ի հաստածիդ աղեղանց. արս երիտասարդս հզաւրս սպառազինս վատնելոց, և երիվարս տաճիկս և երագունս, տապարս և սուսերս մուխս և պողովատիկս և կոռափիս՝ որշափի Խոսրովայ և ձեզ պիտոյ իցէ»;<sup>1</sup> Մովսես Խորենացին, երբ խոսում է Հայկի և Բելի կոհիվների մասին, ասում է. «Եւ ինքն գլխանոց ագուցեալ երկաթի, նշանաւորօք վերջօք, և տախտակս պղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բարձից և բաղկաց. գոտեւորեալ զմէջսն, և յահեկէ զսուինն երկսայրի, և նիզակն արի ի ձեռին իւրում աջոյ, և յահեկումն վահան, և ընտիրք յաջմէ և ի ձախմէ»;<sup>2</sup>

Երկսայրի սրի մասին հիշատակում են շատ հեղինակներ. օրինակ, Ասողիկը Արաս թագավորի կապակցությամբ ասում է. «Որոյ յարգապէս զերիվարն, խնդրեալ, զզարդ զինուցն զանձամբ առեալ, զերկսայրի սուսերն<sup>3</sup> ի ձեռին ունելով՝ ընթանայր»;<sup>4</sup>

Թովմա Արծրունին, երբ խոսում է Գագիկ թագավորի սպառազինության մասին, ոսկեզարդ պատմումանի հետ միասին հիշում է սուսերը. «Եւ զգեցուցեալ ոսկեզարդ պատմուման միանգամայն և գոտի սուսերաւ, հանդերձ ոսկեհուռն փայլեալ զարդու, որ ի վեր քան զմիտս և զբան անցանէ պատմողաց...և բաղմութիւնք

<sup>1</sup> Սեբէռսի եպիսկոպոսի «Պատմութիւն ի Հերակլն», Ա.-Պետերբուրգ, 1879, էջ 38։

<sup>2</sup> Մ. Խորենացւոյ «Պատմութիւն Հայոց», էջ 39։

<sup>3</sup> Բատ երեսույթին գրիչները երկսայրի սուրբ եւկսայրի սուսեր են արտագրել, չըմբռնելով նրանց տարբերությունը։

<sup>4</sup> Մտ. Տարօնացի «Պատմութիւն տիեզերական», էջ 172։

զօրացն սպառազինեալ յաջմէ և յահեկէ՝ թնդումք ճայթմանց և փայլատակմունք սուսերաց, գոշմունք փողոց և հնչմունք եղերաց»:<sup>1</sup>

Այսպիսով տեսնում ենք, որ իշխանների և թագավորների զենքերը և սուսերը հատկապես զարդարված էին լինում ոսկով և այլ թանգարժեք զարդերով, որոնցից զուրկ էր լինում հասարակ զինվորի մարտական զենքը:

11-րդ դարի պատմիչ Ա. Լաստիվերտցին, որ ականատես է եղել սելջուկ թուրքերի կատարած ասպատակություններին, դառնությամբ նկարագրում է Արծն, Կարս, Անի քաղաքների և Բասեն գավառի ավերածությունները, որտեղ բնակչության մեծ մասը սրախողիսող է լինում: «Եւ ապա լարեալ զաղեղունսն և մերկացուցեալ զզէնսն՝ յարձակեցան ի վերայ շինին, հեշտացեալք իբրև յամարայնի, և սուր ի վերայ եղեալ կոտորեցին առհասարակ զամենեսեան ոգիս իբրև երեսուն հազար...».<sup>2</sup> մի ուրիշ տեղ գրում է. «ի գալ միւսում ամին ժողովեցան իբրև արծուիք ի վերայ կերակրոյ անհամար բազմութիւնք զօրաց աղեղնաւորաց և սուսերամարտից»:<sup>3</sup> Մարտի վերջնական հաղթանակը գրեթե միշտ որոշվում էր սուսերամարտով: Ավելի ուշ շրջանի պատմիչներից Ուռհայեցին, երբ խոսում է Վասակ Պահլավունու քաջազործության մասին ընդդեմ թշնամու, մի շարք զենքերի հետ հիշում է նաև պողովատիկ թուրք:<sup>4</sup>

Ուռհայեցին հիշատակում է նաև նիկոր, որ դարձյալ պողովատիկ է և նրանով կարելի էր խփել քաղաքի երկաթե դռան, ծակել ու այն կողմն անցկացնել:

Նա ասում է. «Յայնժամ Ասլղարիան պողովատ ճկուվն հարկանէր զերկաթի դուռն քաղաքին և պատառեալ զերկաթն և յայն դեհն անցուցանէր»:<sup>5</sup>

Հետաքրքրական է 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի պատմության այն հատվածը, որտեղ մանրամասնորեն նկարագրված է Լիպարիտի զինավառությունը: «Եւ այնպէս զինեալ զինքըն՝ հեծեալ ի տաճիկ երիվարն, և ընկենոյր զոսկենկար վահանն

<sup>1</sup> Թ. Արծըրունի, «Պատմութիւնն առան Արծրունեաց», էջ 467:

<sup>2</sup> Ա. Լաստիվերտցոյ, «Պատմութիւն», էջ 118:

<sup>3</sup> Անդ, էջ 70:

<sup>4</sup> Ուռհայեցի, էջ 11:

<sup>5</sup> Մ. Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898 թ., էջ 33:

ի թիկունսն, և զճաւմ նիղակիկն յահեակ բազուկն, և զլայն պողովատիկ շմշիրն երկբերանի ի յաջ ձեռինն»:<sup>1</sup> Ինչպես տեսնում ենք, պատմիշը սրի փոխարեն հիշում է պարսկերեն շիմշիր բառը, որ նշանակում է լայն սուր:

Միջնադարյան շրջանին վերաբերող սրերի նմուշներ գրեթե շունենք, բացառությամբ Անիում գտնված սրից: Անիի պեղածոների մեջ բացի բրոնզյա դաշուզնից, բազիլիկ պալատի նկուղից հայտնաբերվել է երկաթյա ամբողջական մի սուր, որի երկարությունը 96 սմ., լայնությունը, դաստակի մոտ, 9 սմ., իսկ դեպի ծայրը հետզհետե նեղանալով՝ 5 սմ.: Ունեցել է պատյան, իսկ երախակալը վերջանում է գնդաձև ուռուցիկով: Այս սուրն ունեցել է նաև կախելու հարմարություն, որի օղակները գտնվել են սրի հետ միասին: Այս սրի կտրվածքից երևում է, որ նրա կենտրոնական մասը հաստ լինելու հետևանքով բոլորովին հարմար չի եղել խորը հատելու համար, թեև երկսայրի է, բայց գլխավոր նպատակը խոցելն է, իսկ տեղն եկած դեպքում նաև թեթև հատումներ անելը:

Վերոհիշյալ նյութերը մեզ հնարավորություն են տալիս մոտավոր պատկեր կազմելու այդ ժամանակաշրջանում գործածված սրերի, թրերի, սվինների և սուսերների մասին:

Սուրը գործածելու տեսակետով խիստ հետաքրքրական է Մուշի Առաքելոց վանքի դոան վերնասյամի փորագրությունը (12-րդ դար), որը պատկերում է ուազմական մի տեսարան: Այստեղ պարզ երևում է միջնադարում գործածված նետ ու աղեղը, երկար նիղակը և ծանր վահանը ու լայն երկսայրի սուրը: Փայտի այդ դոան վրա քանդակող վարպետը մեծ հմտությամբ կարողացել է տալ զենքերի ձևերը:

Միջնադարյան Հայաստանում սուրը, թուրը, սուսերը և դաշույնը մյուս զենքերի համեմատությամբ ամենից շատ տարածված և ավելի շատ գործածական զենքեր են եղել. Եթե մարդիկ նետ ու աղեղ կամ թե նիղակ կրում էին պատերազմի դաշտում կամ զինվորական երթի ու պահակության ժամանակ, ապա սուր և դաշույն զինվորներն իրենց վրա կրում էին մշտապես, նաև խաղաղ պայմաններում: Բացի զինվորներից, զենքի այդ տեսակները գործ էին ածում նաև աղատները, քաղաքացիք, լեռնցիները, իշխող դասի բոլոր ներկայացուցիչները իրենց տանը և դրսում: Վերջիննե-

<sup>1</sup> Ա. Օ ր բ ե լ յ ա ն, «Պատմութիւն նահանգին Միսական», էջ 375:

րիս մոտ այդ զենքերը, որպես զարդ, պատրաստվում էին նաև ազնիվ մետաղներից ու զարդարվում թանգարժեք քարերով:

Սակր, վաղր, մուրն և նիկո (նկուռ).— Մարտական զենքերի շարքին են պատկանում սակրը, վաղրը և ճիկորը, որոնք պատերազմի ժամանակ կատարել են իրենց սուր բերանով ծանր հարված տալու դեր: Սակրի նախնական ձևին մենք հանդիպում ենք դեռևս երկրորդ հազարամյակում, մ.թ. առաջ: Հնում սակրը, որպես կացին, ծառացել է նաև իբրև աշխատանքային գործիք, իսկ հետագայում նա բոլորովին առանձնացել է կացնից և գործածվել է միայն որպես մարտական զենք:

Մեր թվականությունից առաջ, սուսացին հազարամյակի սկզբներին պատկանող սակր ձուլելու քարե կաղապարներ գտնվել են Հայաստանում Լենինականի մոտ կոմբինատի շենքերի շինության վայրում և ուրարտական Կարմիր Բլուրից:

Հայկական բարձրավանդակում կատարված պեղումներից հայտաբերվել են մեծ քանակությամբ սակրեր, որոնց ձևից արդեն երեսում է, որ մի որոշ մասը գործ է ածվել տնտեսական աշխատանքների համար. եղել են նաև հատկապես ուղղմական գործողությունների համար պատրաստված սակրեր: Հարկ շհամարելով խոսել հնագույն սակրերի մասին, այստեղ հիշատակենք միայն այն փաստերը, որոնք վերաբերում են Արտաշիսյան դինաստիային և հետագա դարերին: Այդ առթիվ մեր պատմիչների մոտ կան բավականին կարևոր և արժեքավոր հիշատակություններ. սակրի հետ միասին նրանք բազմիցս հիշատակում են վաղր և մի քանի անգամ էլ նիկո բառերը, որովհետև ճիկոր և վաղրը պատերազմական գործողություններում կատարել են գրեթե միևնույն դերը, ինչ որ սակրը. սակայն մեր պատմիչների թերի կողմն այն է, որ նրանք բավականացել են միայն անունների հիշատակությամբ և շեն տվել նրանց ձևերի միջև եղած տարբերությունը. ահա այդ է պատճառը, որ դժվարանում ենք լրիվ պատկեր կազմել վաղր և ճիկո զենքերի մասին: Սակրը կամ սակրուրը նման է տապարին և գործ է ածվել որպես ուղղմական զենք՝ հարվածելու, կտրելու, ջարդելու համար: Այս զենքն ամրացվում էր հատուկ կոթի վրա՝ հարվածի թափը մեծացնելու համար. բայց նա տապարի նման լինում է միկողանի կամ երկբերան կորացած կեռի նման, որի համար էլ մեր պատմիչները երկբերան սակրին անվանում են կտցավոր սակր:

Սակայն պետք է ենթադրել, որ միաբերան սակրը, որի բութ կողմը մուրճի դեր կարող էր կատարել թշնամուն բութ, բայց ջախջախիչ հարվածներ հասցնելու մեջ, այլ անուն է ունեցել, բայց չգիտենք, թե ինչ: Մի քանի տարբեր անունների գոյությունը միևնույն ժամանակում, անշուշտ, արդյունք է տարբեր զենքերի գոյության:

Այսօր թեև հնարավորություն շունենք տարբերելու սակրը վաղից, բայց հնում դրանք միանգամայն տարբեր զենքեր են եղել՝ իրենց հատուկ նպատակներով: Մեր պատմիչները դրա համար էլ հաճախ հիշում են միաժամանակ սակրավորների և վաղրավորների բոլորովին առանձին զորագնդեր:

Փ. Բուղանդը, երբ նկարագրում է Վասակ Մամիկոնյանի ճակատամարտը Շապուհի դեմ, հիշատակում է, թե ինչպես Վասակը թագավորի հրամանով իր զորքերը կարգի է բերում և նախապատրաստում հարձակման. այստեղ Վասակը բոլոր ռազմիկներին, ըստ իրենց զինվածության, բաժանում է առանձին գնդերի և՝

«Նա (Վասակ) վաղվաղակի կատարէր զհրամանս թագաւորին. շորեք հարիւր հազար զօր կուռ վառեալք, որ ընտիրք և պատերազմողք էին, լի արութեամբ արուեստաց նահատակութեան: Նիզակաւորք, սուսերաւորք... վաղրաւորք, սակրաւորք, որք ոչ գիտէին զերկիւղ զանգետելոյ յարանց յախոյանց»;<sup>1</sup> Նույն պատմիշը գրում է. «Եւ մինչդեռ գայր նա (Գնել) ընդ բանակամէջն, և էր հեծեալ յերիվարին իւրում, իբրև մերձ եղեւ ի հրապարակն արքունի, և անդ ի յարքունուատ հասանէին բազում սպասաւորք վառեալք սուսերաւորք, նիզակաւորք, վաղրաւորք, սակրաւորք—սուինաւորք և սպարակիրք հետևակք»;<sup>2</sup>

Հ. Դրասխանակերտցին հիշատակում է, թե ինչպես արաբական խալիֆաթի դեմ մղած կոհիվներում վաղրավորները հարվածում և կտրում էին հակառակորդի զրահները:

«Իսկ յելանել արուսեկին փայլատակումք ի մերկապատեան վաղակաւորացն բազմութենէ հատանէին և ի սաղաւարտացն և ի թիկնապահ և ի լանջապահ պղնձի տախտակացն և ի պահպանակացն բարձիցն և բազկացն»:<sup>3</sup>

<sup>1</sup> Փ. Բուղանդ, «Պատմութիւն Հայոց», էջ 130:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 118:

<sup>3</sup> Հովհ. Դրասխանակերտց «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 312:

Իսկ 10-րդ դարի պատմիչ Թովմա Արծրունին հիշում է. «Եւ բազմութիւն զինուորաց վառելոց աստի և անտի, և վարոցաւորք և սակրաւորք այսր անդր քշել զամբոխն կոռթեալ»:<sup>1</sup>

Այստեղ մեջ բերած զենքերի տեսակներից շատերի անունը ևս մինչև այժմ չի պարզված: Վաղակը սրի լայն և ծանր տեսակն է, որը լինում է մերկապատյան և երկսայրի: Ուրեմն նույնն է, ինչ որ սուրբ, բայց վերջինս կարող է ավելի ընդհանուր անուն լինել երկսայրի սրերի մի քանի տեսակների համար: Ինչպես վերևում տեսանք, Թովմա Արծրունին հիշատակում է վաղակավոր զորքի տեսակ: Վակուր բառը, որ հիշատակված է Թովմա Արծրունու գորքի մեջ, խիստ անորոշ է: Ըստ գործածության տեղի (վաղրից հետո և սուսերից առաջ) միանգամայն անհնարին է նրա պարզաբանովիունը, բայց մեղ թվում է, թե իրավացի են նոր Հայկադյան բառարանի կազմողներն ու Ստ. Մալիսասյանցը, որոնք կարծում են, որ գլխագիր Ս և Վ գրերի հնագույն ձևերի շփոթից է առաջ եկել, և այդ բառը պետք է կարդալ ոչ թե Վակուր, այլ Սակուր, որը սակրի ավելի ճիշտ ձևն է:

Վաղրը (սեռ. վաղեր), մարտական կացնի տեսակներից մեկն է, սխալ ենթադրությամբ մի շարք գրքերի մեջ Վաղրը բացատրել են իբրև սրի մի տեսակը: Բուզանդի պատմության մեջ վաղրավոր և սակրավոր զինվորներն առանձին խմբերով են հանդես գալիս: Զորքի տեսակների մեջ այդ երկու նիզակավորներից և սուսերավորներից հետո են թված միմյանց ետևից:

Ստեփանոս Օրբելյանի մի տեղեկությունից պարզվում է, որ զինվորները վաղրը կախում էին իրենց ազդրից ներքեւ և նա նման է եղել դարբնի ուսին (մեծ մուրճին) ու քարհատների կտցավոր սակրին:

Ստեփանոս Օրբելյանը, երբ խոսում է կիպարիտի զենքերի մասին, ասում է,— «Եւ զվաղըն ահագին ի ներքոյ բարձիցն իբր զուռն դարբնաց և կամ զսակը կտցաւոր քարահատաց՝ անցեալ ի մէջ ուազմաւոր հանդէսին»:<sup>2</sup>

Պատմիչի այս քաղվածքից արդեն որոշակի տարբերություն ենք տեսնում վաղրի և սակրի միջև ձևի տեսակետից: Վաղրը

<sup>1</sup> Թովմայի վարդապետի Արծրունուոյ «Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917 թ., էջ 248:

<sup>2</sup> Ստ. Օրբելեան, «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910, էջ 375.

սակրից եղել է մեծ և հնարավոր չի եղել ամրացնել գոտում, ուստի սովորություն է եղել ազդրի վրայից կախելը:

Խորենացու, Հովհան Մամիկոնյանի և Զենոք Գլակի պատմությունների մեջ սակրի և վաղրի փոխարեն մի քանի անգամ հիշատակվում է մուրճը: Խորենացու մոտ հիշատակված մուրճը նմանեցվում է կտցավոր մուրճին:

7-րդ դարի պատմիչ Հովհան Մամիկոնյանը, երբ խոսում է Սմբատի կոիվների մասին, հիշում է, թե ինչպես թշնամու սաղավարտը ոչնչանում է մուրճի հարվածով: «Եւ հասեալ Սմբատայ՝ եհար մըրճովն ի վերայ գագաթանն, և գոգեաց զսաղաւարտն, և գլխոյն ոսկրն փոսեալ՝ տեղի տայր սաղաւարտն մըրճին Սմբատայ, և հազիւ կարաց հանել»:<sup>1</sup> Զենոքը նույնպես հիշում է մուրճի մասին. «Արդ իբրև հարստացան երկոքին կողմանքն, և էին վեց հազար ինն հարեւր քառասուն և վեց արք քրմացն, իսկ հինգ հազար և ութսուն զօրք իշխանացն հայոց, ապա հնչեցուցին զփողս պատերազմացն, և դիմեցին իւրաքանչիւր այր ի դէմ առն դիպանաւորի... իսկ իշխանն Սիւնեաց շհանդուրժեաց առ թշնամանսն. յարձակեալ ի վերայ նորա, եհար մըրճովն ի վերայ սաղավարտին և կտրեալ զնա»:<sup>2</sup>

Այսպիսով, տեսնում ենք, որ մուրճով խփում էին սաղավարտի գլխին՝ նրա սրածայր գագաթը գոգելու և նրա մեջ թշնամու գլուխը շախչախելու նպատակով:

Մուրճը, կարող է պատահել, որ զենքի առանձին տեսակ չին էլ, այլ այդպես կարող էր կոչվել միաբերան սակուրների բութ, մուրճի ձև ունեցող կողմը:


Միջնադարյան ավերակների սկզբումներից, դժբախտաբար, սակրեր միայն մեկն է մեղ ծանոթ, որ դտնվել է Անիում: Այդ սակրը (07 № 101) երկաթից է և նեղ ու երկայն իր ձեռվ նա նման է պատերազմում գործածվող սակրերին, բացի դրանից, մենք սակրերի հանդիպում ենք ձեռագրական մանրանկարչության մեջ: 1232 թվի ձեռագրերից մեկում Գրիգոր անունով նկարիչը տվել է մի խումբ մարդկանց նկարներ, առանց գլխարկների, որոնք ձեռքներին ունեն բռնած սակր և սակրաձև այլ զենքեր: 1414 թվի ձեռագրերից մեկում պատկերված է Հուղարի մատնությունը, որտեղ Քրիստոսին շրջապատող զինվորները զահերի հետ միասին կրում են նաև սակրեր: Չնայած այն հանգամանքին, որ նկարում եղած

<sup>1</sup> Յ. Մամիկոնեան, «Պատմութիւն Տարօնոյ», էջ 35:

<sup>2</sup> Զենոք Գլակայ ասորւոյ, «Պատմութիւն Տարօնոյ», էջ 28—29:

զինվորները հռոմայեցիներ են, սակայն նկարիչն այդտեղ եղած սակրերի ձևը վերցրել է իր միջավայրից և վերցրել է սակրի այն ձևը, որն այդ ժամանակ գործածական է եղել Հայաստանում:

Արժեքավոր փաստ է 11-րդ դարի ձեռագրերից մեկի (ձեռագիր № 6201) մի նկարը, որտեղ ցույց են տրված Հուդայի մատնությունը և նրան շրջապատող զինվորները, որոնք ձեռքներին ունեն բռնած երկբերան և միաբերան կեռ ու երկար ձողերի վրա ամրացված զենքեր, ամենայն հավանականությամբ համապատասխանում են պատմիչների մոտ հիշատակված վաղ-րավորներին: Մատենադարանի 14-րդ դարի № 8772 ձեռագիր ա-



Նկ. 6. Կարդանանց պատերազմը: Մատենադարանի № 1625 ձեռագրից

վետարանի մեջ, որի ծաղկողն է Շերունը, դարձյալ Հուդայի մատնության նկարում Հիսուսին շրջապատող զինվորներից երեքի ձեռքին կան միաբերան վաղբեր, երկար ձողի վրա ամրացված, իսկ երկուսի ձեռքին ծակիչներ, որոնցից մեկը մի ճյուղանի է, իսկ մյուսը՝ շորս ճյուղերով: Նույն նկարի ցածի մասում, որտեղ նկարիչը պատկերում է Պիղատոսի ձեռների լվացումը՝ կանգնած մարդկանցից մեկի ուսին դրված է փոքր կոթով մի զենք, որը համապատասխանում է մեր պատմիչների մոտ հիշատակված սակրին: Նույն ձևի սակրի մենք հանդիսում ենք նաև

1397 և 1437 թվերին գրված ձեռագրերի մեջ, սակայն ամենից ուշագրավը Մատենադարանի № 5472 ձեռագիրն է, որտեղ 80-րդ էջում պատկերված է Ալեքսանդր Մակեդոնացու և Դարեհի կոփիվներից մի տեսարան: Այդ նկարի մեջ, մի շարք զենքերի հետ միասին, երկու կողմերի զինվորների ձեռքին էլ մենք նկատում ենք սակրեր:

Նույն երկսայրի սակրածե զենքերն իրենց գոյությունը շարունակեցին մինչև իսկ 18—19-րդ դարերը, երբ վաղուց արդեն հրազենը գտնված էր: Այս ուշ շրջանի սակրերը, ինչպես նաև զենքի մի շարք այլ տեսակներ իրենց ձևերով խիստ մոտեցել և դրեթե նույնացել են պարսկական զենքերի տեսակներին: Դա միանգամայն հասկանալի է, որովհետև հայերը կորցնելով իրենց ազգային իշխանությունը, վաղուց արդեն գտնվում էին իրանի և Թուրքիայի իշխանությունների ներքո:

Գործոն զենքերի թիվը լրացնելու համար անհրաժեշտ է հիշատակել հին հեղինակների մոտ հիշատակված վարոցը, որը մի հաստագլուխ մահակ է, ծայրը սովորաբար մեծ գամերով ամրացրած: Զենքի այս խիստ պրիմիտիվ տեսակը ծառայել է գլուխ ջախչախելու համար: Եղել են նաև դորքեր, որոնք զլիավորապես վարոցներով են զինված եղել և զորքի այդ տեսակները կոչվել են վարոցաւորք:

Վերեռում թված զենքերը գրեթե բոլորն էլ տեղական են և ինչպես հին դարերում, այնպես էլ միջնադարում պատրաստվել են հատուկ զինական արհեստանոցներում: Ուրարտացիների ժամանակներից մեզ հայտնի է Կարմիր Բլուրի զինանոցը, որտեղից 1936 թվին գտնվել է նաև բրոնզե կացին ձուլելու կաղապար, իսկ միջին դարերում զենք պատրաստելու ամենանշանավոր արհեստանոցները եղել են Դվինում և Հետագայում նաև այլ քաղաքներում (Անի, Արծն և այլն): Պարզ է, որ Արշակունյաց ժամանակ էլ զենքերը պատրաստված պետք է լինեին զորանոցներին և զորակայաններին կից հատուկ արհեստանոցներում, որոնք սակայն դժբախտաբար մինչև այժմ չեն ուսումնասիրված: Այդ տեսակետից կարծում ենք, որ Գառնի ամրոցի և Արմավիրի ապագա պեղումները պետք է տան այս հարցը ճշտող հարուստ նյութ:

Վերոհիշյալ 17-րդ դարի № 5472 ձեռագրի 80-րդ էջում, ինչպես նշեցինք, կա մի մանրանկար, որտեղ Մակեդոնացու և Դարեհի կոփիվն է պատկերացված: Այդ նկարի մեջ ուշագրավն այն է, որ

սառը զենքերից բացի, կա կարճ փողով հրացան, որ առաջին անգամն է հանդիպում մանրանկարների մեջ:

\* \* \*

Միջնադարյան Հայաստանում պատերազմների ժամանակ բերդերը քանդելու և քաղաքները նվաճելու համար գործադրել են հատուկ մեքենաներ, որոնք այս կամ այն առիթով հիշատակել են մեր պատմիչները և տվել այդ մեքենաների անունները՝ Էշ, Փիլուկուան և բարան:

Միջնադարում քաղաքների պաշտպանության գլխավոր միջոցը հանդիսանում էր պարսպապատումը: Դարեր շարունակ Հայաստանը դիմադրել է արտաքին թշնամիների հաճախակի հար-



Նկ. 7. Հուղայիշմատնությունը: Մատենադարանի № 6207 ձեռագրից

ձակումներին, ուստի խիստ անհրաժեշտություն է զգացվել պարսպապատման միջոցով ուժեղացնել քաղաքների պաշտպանությունը: Հայաստանի գլխավոր քաղաքները գրեթե բոլորն էլ պարսպապատված են եղել: Բավական է հիշատակել Տիգրանակերտը, Վաղարշապատը, Կարինը, Մանազկերտը, Կարսը, Դվինը և, վերջապես, Անին, որոնք տարբեր ժամանակներում անընդհատ ենթարկվել են արարների, սելջուկների, մոնղոլների և ուրիշների հարվածներին: Բացի վերոհիշյալ քաղաքներից, կային մի շարք հարվածներին: Բացի վերոհիշյալ քաղաքներից, կային մի շարք ամրոցներ, որոնք կոիվների ժամանակ խոշոր պաշտպանական

դեր էին կատարում։ Այդ ամրոցներից աշքի են ընկել Արտագերս՝ Շապուհի զորքերի դեմ, Կապույտ և Երինջակա բերդերը՝ առաքական արշավանքների ժամանակ։

Հայաստանի վերոհիշյալ քաղաքները ոչ միայն հանդիսացել են տեղական քնակլության պաշտպանության վայր՝ սկսած Հունա-Հռոմեական արշավանքների ժամանակներից, այլև այդտեղ են ամրացել ու ապաստան դտել շրջակա գյուղերի բնակչությունը պատերազմների միջոցին. այդ մասին մեր պատմիչները բազմաթիվ հիշատակություններ ունեն։ Հայաստանի հնագույն քաղաքներից Դվինը, որ հիմնադրվել ու մայրաքաղաք էր դարձել Խոսրով Հ-րդի ժամանակ և փոխարինել է հին Արտաշատ մայրաքաղաքին, ինչպես Արշակունիների, այնպես էլ մանավանդ մարզպանական շրջանում հանդիսացել է առևտրական, վարչական և զինվորական կենտրոն։ Դվինի բնակչության շատության մասին մեզ տեղեկություն է տալիս Սեբեոսը. նրա ասելով, արարները Հայաստանից տարել են մոտ 35 հազար զերիներ։ Տարակույս շիկարող լինել այն մասին, որ ընդհանուր վտանդի ժամանակ Դվին է հավաքվել նաև շրջակա գյուղերի բնակչությունը, այդպիսի փաստերի մենք հանդիսանք ենք նաև այլ տեղերում, հատկապես սելջուկ թուրքերի և մոնղոլական արշավանքների ժամանակ։ «Բազում և անհամար հոգիք ի վերագոյն գաւառացն, վասն տեղեացն ամրութեան՝ անդր ժողովեալ էին»;<sup>1</sup> Իսկ Կիրակոս Գանձակեցին Կարին քաղաքը գրավելու առթիվ դրում է. «Եւ զի յոյժ բազում ամբոխ էր ի ժամանակին յայնմիկ, քաղաքն, լցեալ քրիստոնէիք և տաճկօք, այլև ամենայն դաւառն անդր հաւաքեալ էր»;<sup>2</sup>

Թովված Արծրունին, նկարագրելով Դվինը երկրաշարժից առաջ, հիշատակում է նրա մեծությունը և սկարիստները։

«Մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէալ քաղաքին Արտաշատու, որ բլուրն նորուն ասի, յորում շահաստանն Դուին, մարդախիտ պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրեառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի սղծութեամբ յափրացեալ յըղփացեալ զնա ի հիմանց տապալեալ»;<sup>3</sup>

Միջնադարյան Հայաստանի նշանավոր քաղաքներից էր նաև Անին, որը կրկնապարիսպներով պաշտպանված էր արտաքին թրշ-

<sup>1</sup> Լաստիվերտցի, «Պատմութիւն», էջ 95։

<sup>2</sup> Կ. Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», էջ 264։

<sup>3</sup> Թ. Արծրունի, «Պատմութիւն տանն Արծրունեաց», էջ 371։

նամիների հարձակումներից: Չնայած այն բանին, որ Անին, որպես ֆեոդալական ամրոց, հիշատակվում է դեռևս 5-րդ դարում, սակայն Բագրատունիների մայրաքաղաք դառնալուց հետո այն ավելի ընդարձակվեց և պարսպապատվեց: Անիի առաջին պարիսպներն իրենց բուրգերով (կառուցել է Աշոտ Գ.) տարածվում էին մզկիթի մոտից դեպի Շաղկոցաձոր: Հետագայում, Սմբատ Բ-ի օրով, գլխավորապես քաղաքի հյուսիսային կողմում, կառուցում են նոր պարիսպներ, որոնց բարձրությունը հասնում էր 8—11 մետրի, իսկ լայնությունը՝ մեկ մետրի: Դրանով իսկ ապահովվում էր քաղաքի պաշտպանությունը բյուզանդական հարձակումներից և սելջուկների ու մոնղոլների արշավանքներից: Այդ բոլոր արշավանքների ժամանակ տեղի բնակչությունը ցուց է տվել հերոսական դիմադրություն: Հայաստանի քաղաքների պաշտպանության ժամանակ և բերդերն ու ամրությունները քանդելու համար կիրառվել են տարրեր տեսակի հատուկ գործիքներ, որոնցից մեզ հայտնի են էշը, բարանը, փիլուկուրանը և զանազան տեսակի հրձիդ նյութեր՝ հրդեհներ առաջացնելու համար:

Մ. Խորենացին գրում է, որ պարսկական զորքերը պաշարելով Տիգրանակերտ քաղաքը, նրա նվաճման համար գործադրում են էշ կոչված մեքենան:

«Եւ Յունացն մատուցեալ մեծաւ բռնութեամբ յեցուցին ի պարիսպն և զկոչեցեալ էշն: Եւ է այդ գործի մեքենայից անուառը, յերից երից արանց մղելով տարեալ, և ի ներքուստ կացնովք և սակրօք երկրերանովք և կտցաւոր մրճովք՝ փորել զհիմունսն»:<sup>1</sup> Ինչպես տեսնում ենք, այս մեքենան անիվավոր էր, վերելը հաստ փայտերով ծածկած: Մարդիկ պաշտպանվելով այդ փայտե պատնեշի տակ, մեքենան մոտեցնում էին պատին և նրա տակից հատուկ կացիններով, մուրճերով և սակրով քանդում էին պատերի հիմքերը, պատը փուլ բերելու կամ նրա վրա ծակեր գոյացնելու դիտավորությամբ: Այդ մեքենան կոչվում էր նաև խոյ: Բացի այդ, Հեթում պատմիշը խոսելով Հովառուի արշավանքների մասին, քանդող մեքենաների շարքում հիշում է նաև էշը, կոչելով նրան իշավայրի:

«Հովառոն անվեհեր ի վերայ յարձակեցաւ հանդերձ ստորերկրեայ անցիւք և մեքենայիւք որ իշավայրի կոչին...և ի մէջ ինն աւուրց էառ զայն քաղաքը»:<sup>2</sup>

<sup>1</sup> Մ. Խորենացւոյ «Պատմութիւն Հայոց», էջ 290:

<sup>2</sup> Հեթում պատմիշ, էջ 47:

Պարիսպները քանդող մեքենաներից մեկն էլ կոշվել է փիլիկուան (նաև փիլիկոն, փիլիկան, փիլիպա և այլն), որը, ըստ երևութին, էշից տարբերվել է միայն նրանով, որ քանդելու գործիքը հարմարեցված է եղել իրեն՝ մեքենայի վրա:

Բացի քանդող մեքենաներից, քաղաքների նվաճման համար գործադրել են նաև քար նետող մեքենա, որը կոշվել է քարան: Պատմիչների նկարագրությունից երևում է, որ քարանն ահոելի է եղել, նրանք նույնիսկ հիշատակում են քարանի նետած քարի քաշը, որը հավասար է եղել 60 լիտրի:

«Յետ այսորիկ մեքենայս կանգնեալ, այնու պատերազմէին: Իսկ երէց ոմն ի մերոցս հնագոյն ունելով զաւուրս, որ յոյժ տեղեակ էր արուեստին, և սա իւր կանգնեալ փիլիկուանն. և լինէր յորժամ նոքա քար եղեալ ի պարսատիկս մեքենային և ձգէին ի քաղաքն, երէցն զիւր քարն դէպ ուղիղ նոցա քարին արձակէր, որպէս զի դիպեալ քար երիցուն ի քար անօրինացն, ի վերայ իւրեանց ընկենոյր: Զայս արարեալ անօրինացն եօթն անդամ, ոչ ինչ կարացին վճարել. քանդի զօրացաւ քարն երիցուն ի վերայ քարի նոցա»:<sup>1</sup>

Այս առասպելական տեղեկությունը այնուամենայնիվ ցույց է տալիս այն, որ պաշարված հայերն ամեն կերպ աշխատում էին թշնամու հնարքների դեմ նոր միջոցներ որոնել՝ նրանց հնարքների ուժն ու ազդեցությունը շեղոքացնելու համար: Սելջուկները դժվարությունների հանդիպելով, ստիպված են լինում կովում գարծադրել քարան կոշված մեքենան, որը համեմատաբար ավելի մեծ պետք է եղած լինի: 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին ևս հիշում է այդ մեքենայի մասին Կարնո քաղաքի ավերման ժամանակ: Կարնո քաղաքը, որ հանդիսացել է հռոմեական կայազորի հիմնական հենակետը և ամուր պաշտպանված է եղել պարիսպներով, մոնղոլների կողմից ենթարկվել է խիստ ավերման: Կ. Գանձակեցին դառնությամբ է խոսում քաղաքին հասցրած ավերածության մասին:

«Իսկ նոքա (թաթարները) իբրև տեսին եթէ ոչ ողջունեցին զիսաղաղութիւն, յամենայն կողմանց քաժանեալ զպարիսպ քաղաքին, զլիսաւրացն, զի վլուսցեն առ հասարակ. և նոցա փոյթյանձինս կալեալ, կանգնեցին փիլիկուանս քաղումս, և կործանեցին զպարիսպն, և մտեալ ի ներքս, սրոյ ճարակ զամենեսին տու-

<sup>1</sup> Լաստիվերտցի, «Պատմություն», Թիֆլիս, 1912, էջ 102—103:

Եալ անողորմաբար, և յափշտակեալ զինչսն և զստացուածսն հրովարեցին զքաղաքն»:<sup>1</sup>

Նույն պատմիչը փիլիկուան մեքենայի գործադրման մասին հիշատակում է Գանձակի գրավման ժամանակ: «... և յանկարծակի հասին զօրք թաթարին, և պատեցին զքաղաքն յամենայն կողմանց, և մարտ եղեալ մարտնչէին ընդ նմա բազում մեքենայիւք, և հարին զայգեստանն՝ որ շուրջ զքաղաքաւն էին: Ապա փլուցին և զպարիսպ քաղաքին փիլիկուանօք յամենայն կողմանց. և ոչ եմուտ ի քաղաքն ի թշնամեացն, այլ վառեալք զինու պահեցին զքաղաքն շաբաթ մի. իսկ բնակիչք քաղաքին իբրև տեսին՝ թէ առաւ քաղաքն ի թշնամեացն, մտեալ իւրաքանչիւր ոք ի տուն իւր՝ այրեաց ի վերայ իւր զշինուածն»:<sup>2</sup> Քար նետող բարան ահոելի, մեքենան ևս, ինչպես վերեւում հիշեցինք, գործադրվել է սելջուկների և թաթարների ժամանակ: Շատ հաճախ այդ մեքենան կոշվել է նաև լատիներեն բալիստր —balistra.

«Կանզնէին Մանգղիոնս և մեքենայս պալիստր նետաձիգ աշտարակս»:

Կային նաև աշտարակաձև փայտյա հատուկ սարքավորումներ, որոնք մոտեցնում և հենում էին քաղաքի պարիսպներին և նրանց վրայով վահանով պաշտպանված զորքը խիտ շարքերով մտնում էր քաղաք:

Բարան մեքենայի մասին Արիստակես Լաստիվերտցին գրում է. «Ապա այլ պատերազմական զործի պատրաստեալ, զոր ինքնանք բարան կոշէին, որ յոյժ ահազին էր, զոր ասէին թէ շորս հարիւր սպասաւորք էին նորա, որք զպարանսն քարշէին, և վաթսուն լիտր քար եղեաւ ի պարսատիկսն, ի քաղաքն ձգէին. և տուազի նորա պարիսպ կանզնեցին ի բամբակի բեռանց և յայլ բազում կարասւոյ, զի մի քար երիցուն հասցէ ինա: Եւ իբրև զայս այսպէս յարդարեցին, արձակեցին քար մի, որ դիպեալ ի պարիսպն ուժգնակի, փլոյց և խոռեաց զնա»:<sup>3</sup> Սակայն թշնամուուրախությունը երկար չի տեսում. բնակչության միջից մեկը նավթից ու ծծումքից խառնուրդ է պատրաստում, լցնում ապակե շշի մեջ և անցնելով թշնամու բանակը, շիշը նետում է բարանի վրա և այրում: Այդ նույն միջոցառումների մասին հիշում է նաև Ռուհայեցին՝ «բայնժամ առաքեաց ի Բաղէշ և ետ բերել զբարանն,

<sup>1</sup> Կ. Գանձակեցի, էջ 264:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 222—223:

<sup>3</sup> Ա. Լաստիվերտցի, «Պատմութիւն», էջ 103:

զոր Վասիլ թագաւորն արարեալ էր յաղագս հերայ հնդետասահատիլի (օղիւ) ահաւոր և զարմանալի: Եւ յորժամ կանգնեցաւ անօրէն բարանն, սոսկաց ամենայն քաղաքն. և զառաջին որ եհար՝ երեք այր պահ և զկրծապահն ի քաղաքն ձգեաց. և յայնժամ երէց մի յայտնեալ ի քաղաքն և ի շտապոյ դրեալ մեքենայ մի ընդդէմ, նորա և յառաջին քարէն հարկանէր զբարանն և բեկանէր զիոզակն. և զօրացաւ քաղաքն, վասն զի ահիւ պաշարեցան»:<sup>1</sup> Ապաշարունակում է. «Եւ յետ աւուրց ամրացուցին այլազգիքն զբարանըն, և կազմեցին յամենայն կողմաց անմերձենալի, սկսան հարկանել զպարիսալ քաղաքին մեծամեծ քարամբք. և յայնժամ ահաբեկեալ երերալով դողայր ամենայն քաղաքն: Յայնժամ Վասիլն ձայն տուեալ առ ամենայն քաղաքն և ասէր. «Ով ոք կարասցէ ելանել և հրով այրել զբարանն (ոմն ի փոանդաց): Եւ խնդրեաց զօրաւոր և քաջ ձի և զգեցեալ զրահս և եղեալ սաղաւարտ ի գլուխըն և առեալ թուղթ կապեաց ի ծայր ոմբին և երեք շիշ նաւթ դրեալ ի ծոց իւր՝ և թղթաւորի պատճառանօք յառաջ ելեալ... և գնայր... և եկեալ փոանդն առաջի քաբանին՝ զտեղի առեալ և ոչ գնայր. և կարծէին ընդ մեծութիւն բարանին կայ և հիանայ՝ և ի նոյն ժամայն հանեալ զմէկ շիշն և հարկանէր զբարանն. և որպէս զարծիւ շուր առեալ զբարանովն նա հարկանէր զմիւս այլ շիշն. և դարձեալ շուրզ եկեալ և շորրորդ շիշն զարկանէր զբարանն. և ահաւոր քորրոքեցաւ հրով, և փոանդն դարձաւ ի փախուստ»:<sup>2</sup>

Ինչպես փաստերը ցույց են տալիս, հատուկ պատրաստված վառելանյութերով ազդաբնակությունը կովել է այդ հսկա մեքենաների դեմ: Փաստերը ցույց են տալիս նաև, ինչպես բյուզանդական կայսրության, այնպես էլ սելջուկյան և մոնղոլական պատերազմների ժամանակ քաբանը գործածական է եղել և հանդիսացել է ամրություններ քանդող և մեծ քարեր նետող կարևոր մեքենա, որի դեմ պաշարվածները մեծ մասամբ կովել են հրձիգ նյութերով: Վերոհիշյալ մեքենաները քաղաքների պարիսպներին մոտ տանել շկարողանալու և ընդհանրապես պաշտպանող պարիսպներին թշնամու մոտեցումն արգելելու համար քաղաքներ շինում էին ջրով շրջապատված վայրերում (Արտաշատ, Անի) կամ ժայռոտ տեղերում: Հաճախ բերդերը շրջապատում էին արհեստական ջրային գոտով և այլն:

<sup>1</sup> Մ. Ռւռհայեցի, «Ժամանակազրութիւն», էջ 119—120:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 120—121:

Միջնադարյան պատերազմներում, բացի վերռհիշյալ մեքենաներից, գործածվել են նաև մի շարք գաղային նյութեր, որոնց մասին հատուկիենու տեղեկություններ ենք գտնում պատմիչների մոտ: Սեբեոսը, երբ խոսում է պարսկա-բյուզանդական կոիվների մասին, մեքենաների թվում հիշում է նաև հրացան. նրա պատմությունից երեսում է, որ հրացան նշանակում է հուր ձգող գործիք, որը գործադրվել է հատկապես նավերի վրա:

«Զի էր կազմեալ ի վերայ նաւացն մանդղիոնս, և մեքենայս հրացանս, և մեքենայս քարընկէցս, աղեղնաւորս և պարսաւորս զի յորժամ հասանիցեն ի պարիսապ քաղաքին ի վերուատ ի գլխոյ աշտարակացն դիւրեաւ ելեալ ի պարիսապն անկիցին ի քաղաքն»:<sup>1</sup>

Հրացանության մասին հիշատակում է նաև Դրասխանակերտցին, երբ խոսում է Աֆշինի կոիվների մասին Դվինի պաշարման ժամանակ.— «Պաշարեալ ուժգնավէս զնոսա և բաղում աղխատրոյզ շփոթմունս և աւարառութիւնս և տնկակոտորութիւնս և հրացանութիւնս զնոքօք զեղեալ՝ ստէպ ստէպ զերկեամ մի զայս առնէր»:<sup>2</sup>

Թ. Արծրունու մոտ ավելի հասկանալի է դառնում, երբ նա տալիս է նիկ ամրոցի վրա հարձակվելու նկարագիրը: Բուղա զորավարն իր աղեղնավորների և հեծյալների խմբերով սկսում է հարձակումը թոռնավան գավառի նիկ ամրոցի վրա: Պատմագիրն այստեղ հիշատակում է, որ այդ զորքերն ունեին բոլոր տեսակի զենքերը, որոնց թվում նաև «Այլ հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին և զլոյծ բնութիւնս յանօթս ապակեղէնս եղեալ, եւ մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եղեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն»:<sup>3</sup>

Վերռհիշյալ քաղվածքներից երեսում է, որ հրաձգությունը վերաբերում է այն այրող հեղուկներին, որոնք գործադրվում էին քաղաքներ գրավելու ժամանակ հրդեհ առաջացնելու համար: Հրաձգություն կատարում էին թե՛ մեքենաների միջոցով և թե՛ ձեռքի շներով:

\* \* \*

Հրացանությունից և ոռմբերից պաշտպանվելու համար մարդիկ զրահավորվում էին այնպիսի հագուստներով, որոնք դիմա-

<sup>1</sup> Սերէսս, «Պատմութիւն ի Հերակլին», էջ 236:

<sup>2</sup> Յ. Դաստիանակերտեցւոյ «Պատմություն Հայոց», էջ 160:

<sup>3</sup> Թ. Արծրունի, «Պատմութիւն տանն Արծրունեաց», էջ 219—220:

նում էին կրակին, Բացի այդ՝ պարիսպներն ու շենքերը ծածկում էին հատուվ կաշիներով և այդպիսով շենքերը պաշտպանում հրդեհներից:

Թ. Արծրունին գրում է. «...Եւ որք մերձ առ պարիսպօքն զճակատն վառէին և զմարտն գրգռէին՝ զգեստն ինքեաց յասովէից կազմեալ, զոր ի զօրութիւն թիկանց ուժոյ բաղկաց ճնշեալ և մածուցեալ ընդ միմեանս՝ զնրբութիւն մազոյն թաղ կոչեցին, զոր ի ջուր եղեալ՝ ծծէ իբրև զսպունդ, զայն զինեալ ի վերայ անձանց՝ սաստկացուցանէն զպատերազմն, աներկիւղ մնալով ի հրոյն տոշորմանէ»:<sup>1</sup>

Ինչպես տեսնում ենք, Հայաստանում գոյություն են ունեցել ոչ միայն սառն զենքեր, որոնցով կռվել են թշնամու կենդանի ուժի դեմ, այլև գոյություն են ունեցել մեքենաներ, որոնցով կարողացել են քանդել քաղաքի պարիսպները և այլ ամրություններ: Քար նետող մեքենաների միջոցով քանդելու վտանգի տակ են գրել քաղաքի ներսի շինությունները: Բացի այդ, պարսաքարերի և զանազան տեսակի հրծիդ նյութերի միջոցով պայքարել են քանդող և քար նետող մեքենաների դեմ, կամ հրդեհներ են առաջացրել քաղաքի ներսում:

Զրահներ.— Միջնադարյան Հայաստանի հայկական զորքի պաշտպանության հիմնական միջոցներից մեկը հանդիսացել է զրահավորումը: Պաշտպանական հագուստների մասին մենք տեղեկություն ունենք դեռևս Հերոդոտի ժամանակակիցներից. Երբ նա նկարագրում է Քսերքսեսի զորքի հագուստը, հիշում է, որ հայերը զինված էին փոյուգացիների նման: Հետագա դարերի մեր պատմիչների մոտ այդ մասին ունենք բավականին հարուստ տեղեկություններ: Սպառազինված հայ զորքին պատմիչներն անվանել են «երկաթապատք», «զրահաւորք», «զրահապատք», «պատենազենք», «շերտաւորք»:<sup>2</sup> Այն զգեստը, որով պաշտպանվում էին, պատրաստված էր լինում բացի մետաղից, նաև կաշուց կամ հատուկ մազից, որ գլխավորապես պաշտպանում էր զինվորի մարմինը այրումից: Մետաղից պատրաստված զրահներն իրենց գործվածքով տարբեր տեսակի էին լինում, ինչպես օրինակ՝ հյուսվածքածե, օղակածե և շերտավոր. շատ հաճախ մետաղյա հագուստի որոշ մասը միացած կամ հյուսված էր լինում կաշվե-

1 Թ. Արծրունի, «Պատմութիւնն տանն Արծրունեաց», էջ 220:

2 Փ. Բուղանդ, «Պատմութիւն Հայոց», էջ 130, 137, 203:

աստղոի վրա: Սպառազինվում էին ոչ միայն մարդիկ, այլև ձիերը: Ագաթանգեղոսը, երբ խոսում է Տրդատի մասին, հիշում է, որ նրա ձին «ասսլաղեն է»:<sup>1</sup> Փավստոս Բուղանդը Մուշեղ Մամիկոնյանի զորքի մասին գրում է. «Կուռ վառեալք պատեղէնք և զրահաւորք կազմ ամենայնիւ»:<sup>2</sup> Մեր պատմիչները նկարագրում են նույնիսկ զրահների փայլը: Եղիշեն, նկարագրելով Ավարայրի ճակատամարտը, հիշում է նաև գործադրված սառը զենքերի փայլի, աղմուկի ու ձայների մասին:<sup>3</sup> Մ. Խորենացին խոսելով Տիգրանի զորքի մասին, հիշում է, որ «մերկքն վահանօք և զգեստիւք երկաթոյ պարածածկեալք:... և որ ի նոցայցն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք զթշնամիսն արտահալածել»:<sup>4</sup> Զրահով պաշտպանված էր լինում ոչ միայն զինվորի իրանը, այլև բազուկները, ազդրերը. դեմքի և գլխի պաշտպանության համար կային հատուկ ծածկոցներ: Մովսես Խորենացին Հայկի և Բելի կոփլը նկարագրելիս ասում է՝ «Եւ ինքն գլխանոց ագուցեալ երկաթի, նշանաւորօք, վերջօք, և տախտակս պղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բարձից և բազկաց. գոտեորեալ զմէջսն, և յահեկէ զսուրինն երկսայրի. և նիզակն արի ի ձեռին իւրում աշոյ, և յահեկումն վահան, և ընտիրք յաջմէ և ի ձախմէ»:<sup>5</sup>

Խոսելով Տրդատի մասին, Խորենացին հիշում է. «... և ինքն վառեալ վերտ պահպանակօք, ուր ոչ գծէին նետք»:<sup>6</sup>

Մ. Խորենացու մոտ հիշատակված «տախտակս պղնձիս թիկանց և լանջաց» համապատասխանում է վարապանակին: Լանջանոցը մեր պատմիչներն անվանել են նաև ճօշ:

Ն. Շնորհալին «Ողբ Եղեսիոյի» մեջ նկարագրելով Զահղի Ամիրայի զորքերի հարձակումը Եղեսիայի վրա, ի միջի այլոց սսում է. «զրահաւորք մըկնդաւորք, ճօշիւք պատեալ՝ բոլոր անձին...»,<sup>7</sup> իսկ Ռուհայեցին իր պատմության մեջ ասում է՝

«Եւ ձիս և ջորիս և ուղտս անհամարս, և վրան ջօշան, և այլ ոլեհ որ ոչ գոյ թիւ, և ոշխար բազում, լցաւ քաղաքն Անի ամե-

<sup>1</sup> Աղաթանգեղոս, էջ 158:

<sup>2</sup> Փ. Բուռզանդ, «Պատմութիւն Հայոց», էջ 203:

<sup>3</sup> Եղիշեն, էջ 91:

<sup>4</sup> Մ. Խորենաց, «Պատմութիւն Հայոց», էջ 74:

<sup>5</sup> Անդ, 39:

<sup>6</sup> Անդ, էջ 230:

<sup>7</sup> Ն. Շնորհալի, «Ողբ Եղեսիոյ», 1829, էջ 34:

նայն հարստութեամբ... մինչև զընտիր ջօշանն երկու դանկ ծախէին»:<sup>1</sup>

Այս քաղվածքներից երեսում է, որ պատերազմի ժամանակ լանջանոցներ պատրաստում էին կաշվից կամ համապատասխան կտորից:

Արաբական ոստիկանների դեմ կովելու ժամանակ Արտավազդ Մամիկոնյանը, զորքը զինելու համար, գնում է Դվին, որտեղից ստանում է «զէնս անօթս պատերազմի և վառէր զենքն զրահիւք սաղավարտիւք»: Պատմիշները Զիրավի ճակատամարտի ժամանակ հիշում են նույնիսկ կաշուց պատրաստված հագուստների մասին. «Քանզի զօրքն Յունաց վառեալ էին ի զէնս ոսկոյ և արծաթոյ, և երիվարք նոցա նոյնալէս զարդու: Եւ էր տեսանել իրը զպարհսպ ինչ, յորոց յոլովք ի ջղեայ և ի կաշեայ պահպանականց զգիստուն զկարծրութեան վիմաց բերէին երեսյթս. և ի վերայ նոցա անխալամ գէսք նշանք արձակեալք իբր զսաղարթ ինչ հովանաւոր ծառոց: Բայց զվիշապացն մանուածս ահազին բերանաբացութեամբ ուռուցեալ ի փշմանէ օդոյն, ոչ ինչ ուրեք կարեմ նմանեցուցանել, այլ միայն իրը զլեառն ինչ աղամանդեայ խոնարհիլ ի ծով՝ զբովանդակ ճակատն Յունաց ի պարսկական զօրսն: Քանզի և զնոսա էր տեսանել իրը զհզօր ինչ զհտ առ ի կողմն ի լայն ծաւալեալ. արդարեւ զջրոյ դոյն զրահազդեստացն բերէր տեսութիւն»:<sup>2</sup>

10-րդ դարի պատմիշ թ. Արծրունին հիշատակում է մազե զգեստների մասին, որոնցով զինվորները պաշտպանվում էին հրդեհից. «Եւ որք մերձ առ պարսպօքն զճակատն վառէին և զմարտըն գրգռէին՝ զգեստն ինքեանց յասուէից կազմեալ... աներկիւզ մնալով ի հրոյն տոշորմանէ... մասն եւ զերիվարսն ի հեծեալս նոցա զինեալ սպառազինօք, շոնջապահս ձիոցն և տաշտս դաւակացն և զանգապահս ի շորս կողմանս, ձգեալ և լանջացն զէն, և բարձրավիզ խրոխտանացն զրահս, և ոտնատորոփի փոնկալոյն մանեակս, զանգակեալս, և մահիկս լուսնաձես ի մէջ ճակատուն կապեալ, և զնիւս երիվարացն երկաթապատ պնդեալ, այլև աստի և անտի երիվարի փորոյն տախտակագործ գրգեալ ըստ փորոյն շափու մածուցեալ ի ձեւ վահանի զգործ արուեստի զինուն ցուցանեն: Եւ

<sup>1</sup> Մ. Ռւռհայեցի, «Ժամանակագրութիւն», էջ 426:

<sup>2</sup> Մ. Խորենացւոյ «Պատմութիւն Հայոց», էջ 305—306:

ինքեանք արկեալ զրահ զանձամբ, և սաղաւարտ ի գլուխ եղեալ, բաղպանս ի ձեռն արկեալ, զանգապանս ի վերայ բարձիցն պընդեալ, օդ ոտիցն կօշկածե արուեստաւորեալ, վահան ի թիկունս եղեալ...»:<sup>1</sup>

Բացի դրանից, պետք է ասել, որ հայկական զորքի առանձին դնդերն ունեցել են նույնիսկ իրենց հատուկ տեսակի և գույնի համազգեստներ. այդ մասին հիշատակում է Ա. Լաստիվերտցին: Սակայն եղել են նաև հայկական զորքի այնպիսի մասեր, որոնք զրահավորված չեն եղել. այդ երեսում է Վարդանանց պատերազմի նկարագրությունից,<sup>2</sup> երբ պարսիկ հազարապետ Միհրներսեհը հետաքրքրվում է, թե հայկական 60 հազարանոց բանակից քանի՞ հոգի սպառազինված են և դրանցից քանի՞ հոգի մերկ են: Միջնադարյան զինվորը կովելու և երկար դիմադրելու համար անպայման պետք է ոտքից գլուխ զրահավորված լիներ: Սովորաբար գործածված զրահները կարելի է բաժանել երեք մասի— առաջին՝ գլխանոց, որը պաշտպանում էր վզից վերև, երկրորդ՝ իրանի (լանջապան) և երրորդ՝ բազուկների և ազդրերի համար (պահպանակք բարձի և բազկի):

Վահան.— Միջնադարում վահանը կատարել է պաշտպանական խոշոր դեր, որի միջոցով բաց դաշտում զորքը պաշտպանվել է հակառակորդի հարվածներից: Վահանը հնում պատրաստում էին ոչ միայն մետաղից, այլև փայտից՝ ծառի հաստ ճյուղերից հյուպած և կաշեալատ: Այդ մասին տեղեկություն ունենք հույն պատմիչ Քսենեֆոնից: Բացի նյութի զանազանությունից, վահանները եղել են տարրեր ձևերի և տարրեր մեծության՝ ձվածե, անկյունավոր և կլոր: Զինվորները վահանը կրում էին ձախ ձեռքով: Այս պաշտպանական զենքը կազմված էր երկու հիմնական մասից՝ շրջանակից և բռնելու հարմարանքից. որը հակառակ կողմից եղբարից ամրացված մի գոտի էր: Զորքի կովող տեսակները մեծ մասսամբ գործ են ածել փոքր վահաններ, որոնցով պաշտպանվել են հարվածներից և հետ են վանել քարերի, նետերի, դաշույնների, վաղրերի, սակրերի հարվածները: Թեթև վահաններն իրենց կենտրոնում ունենում են մետաղյա սրագագաթ ուռուցք, որով երբեմն էլ հարվածում էին թշնամուն, այսպիսով, վահանն այդտեղ հանդես է դալիս իրեւ գործոն հարձակողական զենք: Զորքի սպայական կազմն

<sup>1</sup> Թ. Արծրունի, «Պատմութիւն», էջ 220:

<sup>2</sup> Եղիշե, «Պատմութիւն Վարդանանց», էջ 139:

ունեցել է ասպայակիրներ (վահանակիրներ), որոնք երթի ժամանակ տանում էին իրենց սպայի մարտական ծանր վահանը։ Սակայն գոյություն է ունեցել նաև զորքի մի ուրույն տեսակ, որը միայն ծանր վահաններով մարտի ժամանակ կովողների առաջը փակում էր, որպեսզի աղեղնավորները աղատ կերպով գործեն իրենց երկու ձեռներով և շղթաղվեն պաշտպանվելու հոգսերով։ Զորքի այդ տեսակը Հայաստանում կոչվել է վահանավոր։

Հնագույն շրջանին պատկանող դամբարաններից մեծ քանակությամբ հայտաբերվել են բոլոր տեսակի սառը զենքեր, սակայն ոչ մի անգամ վահան չի գտնվել։ Նշանակում է, որ Հայաստանի տեղական ցեղերը մինչև ուրարտացիների հանդես գալը, վահանի գործածության ծանոթ չեն եղել։ Առաջին անգամ Հայաստանում վահան մուտք է գործել ուրարտական պետական զորքի հետ միասին առաջին հազարամյակի սկզբներին։ Ուրարտական վահաններ են գտնված վանի Թոփրակսկալայի պեղումների ժամանակ և մի քանիսն էլ Երևանի մոտ Կարմիր Բլուրի բերդի միջից։ Կարմիր Բլուրում գտնվել է ծավալով մեծ և քաշով ծանր մի վահան, որը, հավանաբար, ծառայել է նաև հանդեսների համար և եղել է պալատի զարդարանքներից մեկը։ Պատերազմում վահաններով զինված էին լինում հայկական զորքի թե՛ հետեւակը և թե՛ հեծյալը, միայն հեծյալների վահանները ծավալով ավելի փոքր էին, որովհետև հեծյալները ամբողջովին զրահավորված էին։

Հայկական զորքը, ինչպես նշեցինք, ունեցել է հատուկ գընդեր, որոնք կոչվել են մերկեր (հավանաբար նշվել է զրահավոր վիճակներ)։ այդպիսիների շարքին էին պատկանում աղեղնավորները։ Դրանք մարտերը վարում էին հեռվից և կարիք չունեին պաշտպանվելու, մանավանդ որ նրանց երկու ձեռքերն էլ զբաղված էին կամ, ինչպես ասացինք, նրանց պաշտպանում էին վահանակիրներն իրենց ծանր վահաններով։

Խորենացին հիշատակում է, որ Տիգրան II-ի ժամանակ՝ «մերկքն վահանօք և զգեստիւք երկաթոյ պարածածկեալք»<sup>1</sup> Այս միաստն արդեն ցուց է տալիս, որ Տիգրանից առաջ և նրա ժամանակ մերկերի թիվը մեծ է եղել։

Արշակունիների շրջանից վահանավորների մասին բավականին հարուստ տեղեկություններ կան Բուզանդի մոտ, հատկապես

<sup>1</sup>Մ. Խորենացւոյ «Պատմութիւն Հայոց», էջ 74։

Արշակ և Պատ թագավորների ժամանակ, երբ կռիվները Հայաստանի և Պարսկաստանի միջև ստացել էին սուր բնույթ և հայկական զորքը հերոսաբար պաշտպանում էր իր երկրի անկախությունը:

«Յորժամ տարածանէին ինչ զօրքն Պարսից զղօրսն Յունաց և կամ զգունդ նիզակաւորացն Հայոց, ի լեզոն վահանաւորացն Յունաց կամ ի սպարակիրն Հայոց իբրև ի բերդ մտեալ հանգչէին»:<sup>1</sup> Կամ թե — «Զի յորժամ Հայոց նիզակաւորքն առաջի կարդէին, այսպէս յարձակէին որպէս զլեառն մի բարձր, և կամ որպէս զաշտարակ մի հաստարեստ հզօր և անշարժ. և յորժամ մեք զնոսա սակաւ մի շարժէաք, նոքա ի լեզոն Հոռոմոց ապաստան լինէին. և նոցա զվահանափակսն բացեալ, զնոսա իբրև ի քաղաքորմ պարսպաւոր ամրացեալ ընդունէին»:<sup>2</sup> Ապա մի քանի էջ հետո ավելացնում է, թե երբ Դղակ իշխանին, իբրև դավաճանի բերում են այն դահլիճը, ուր Արշակ թագավորն էր, այն ժամանակ սակրավորները սպարներով ծածկում են միջանցքի վրա բացված անցքերը: «Իսկ յորժամ մուծին ի փող տանցն՝ յորում արքայն էր, և էր փողն ընդ երկար, բազում երդս լոյսիջոյցս էր թողեալ, և տանէին զնա ընդ այն, կայր շուրջ սպարակիրն փակեալ սակրաւորքն և զերդս ամենայն լուսոյն ծածկէին: Ապա մտեալ շուրջ զնովաւ ի տեղոցն ձգձգէին զնա սպարակիրքն»:<sup>3</sup> Փաստերը ցույց են տալիս, որ սպարակիրները և վահանավորները զորքի առանձին տեսակներ են և հարկ եղած դեպքում զորքի մյուս տեսակներին կամ իշխաններին ու թագավորին վահանափակ էին անում և ապահովում նրանց կյանքը: Վահանովոշ միայն պաշտպանվում էր անհատապես ամեն մի զինվոր իր վրա հարձակվող թշնամուց, այլև զինվորները համախմբված փակ շղթայով ամուր «բերդեր» էին պատրաստում և նրա միջին սլաշտպանվում էին թշնամու համար անսպասելի կերպով: Եթե պարսկական բանակը որպես ամուր պատնեշ գործածում էր մեծ թվով փղեր, ինչպես, օրինակ՝ Ավարայրի ճակատամարտի ժամանակ, ապա, դրան հակառակ, հայերը պարսկական նետերից պաշտպանվում էին իրենց վահաններով, կազմելով վահանափակ շղթաներ: Հայկական զորքի այն գնդերը, որոնք զինված էին նիզակներով, անպայման պետք է վահաններ

<sup>1</sup> Փ. Բուղանգ, «Պատմութիւն Հայոց», էջ 201:

<sup>2</sup> Անդ, էջ 202:

<sup>3</sup> Անդ, էջ 204:

ունենային, չհաշված այն, որ նրանց անբաժան զենքն էր համարվում նաև սուրբ:

5-րդ դարի պատմիչ Եղիշեն, խոսելով Վարդանանց պատերազմի մասին, հիշում է, թե մարտից առաջ, երբ Վարդան Մամիկոնյանի հրամանով Հայաստանի մասերից հայ նախարարները հավաքում են իրենց զորքերը, նրանք ունեին «սուր ընդ մէջ և վահան ի ձեռին»:<sup>1</sup> Իսկ Ավարայրի ճակատամարտի ժամանակ՝ «կոփիկն վահանաւրաց... զլսելիս ամենեցուն առհասարակ զխլացուցանէին»:<sup>2</sup> Պատահել է, որ հայ զորավարները հաշվի առնելով թշնամու ուժի մեծությունը և իրենց փոքրաթիվ լինելը, դիմել են խորամանկության: Պատերազմի դաշտում հանկարծակիություն ստեղծելու համար ինչպես պարսիկները մի շարք կոխվներում կատաղած փղեր էին օգտագործում, այնպես էլ հայկական զորքերը որոշ դեպքերում, փղերի փոխարեն, օգտագործել են ջորիներ, այն նպատակով, որպեսզի իրարանցում և շփոթ առաջացնեն թշնամու բանակի մեջ: Ճիշտ է, ջորիները փղերի նման վտանգավոր չեն մարդկանց կոխութելու համար, բայց աղմուկ տղաղակի մեջ խրտնած ջորիներն էլ ոտի տակ էին տալիս թշնամուն և իրարանցում առաջացնում ամենուրեք: Այդ մասին մի շատ հետաքրքիր հիշատակություն ունի Հովհան Մամիկոնյանը. «Իսկ Վահանայ լցեալ իմաստութեամբ, առեալ երկերեւը կաշեայ ասպար, և արկ զհարեւը ջորեօք ամեհեօք, երկաթ մի յայս կոյս ասպարին, և երկաթ մի յայն. և զնայ մերձ ի բանակն Հոնին՝ որ փոխանակ էր Տիգրանայ և ունէր ընդ ձեռամբ իւրով ութ հաղար այր, և բանակեալ էր մերձ ի քարավլուխն... արդ առեալ Վահանայ զհարեւը ամեհի ջորիսն, և տարաւ զնոսա յեզր բանակին, և ի տասն ջորիսն այր մի՝ որ զհետ երթայր: Եւ իբրև խթեցին դշորիսն սրով և արկին ի բանակն, և ինքեանք զհետ մտեալ՝ զփող պրատերազմին հնչեցուցին... քանդի և ջորիքն ընդ ձայն տսպարացն, և ընդ զօրացն աղմկել, և ընդ փողոցն բախելն խրտուցեալ, յամենայն կողմանց լոկ արշաւէին ի բանակն: Եւ զօրքն կարծէին եթէ հեծեալ է, և ձայն սուսերացն ի կոտորելոցն է...»:<sup>3</sup>

9-րդ դարի պատմիչ Հ. Դրասխանակերտցին Սահակ իշխանի զորքի մասին հետեւյալն է ասում. «Հրամայէր հետեւակամարտ

<sup>1</sup> Եղիշե, «Պատմութիւն Վարդանանց», էջ 82—83:

<sup>2</sup> Անդ. էջ 170:

<sup>3</sup> Յ. Մամիկոնեան, «Պատմութիւն Տարօնոյ», էջ 45—46:

գնդին վահանափակ լինել, որ տեսութիւն իմն բերէր յինքն որպէս անպարտելի պարիսպ. և ի թիկանց կուսէ նոցա զհեծելազոր գունդն պատրաստէր՝ սպառազինեալս և վառեալս ի զէնս և ի զարդա. և առաջապահքն առաջի վահանափակ սպային սրավարերիվարօք խաղացեալ՝ յայսկոյս յայնկոյս երթային գային»;<sup>1</sup>

Այս փաստերը ցուց են տալիս, որ անհատ զինվորի ձեռքին վահանը ոչ միայն պաշտպանության միջոց էր հանդիսանում, այլև պաշտպանական մարտերում դառնում էր շարժական ամրություն, նրանով պաշտպանվում էր հետևակը բաց դաշտում և վահանների հովանու տակ հետևակ նետածիգները՝ հարվածում էին թշնամուն:

Չնայած այն հանգամանքին, որ պատմիչները մի քանի տեղ հիշատակում են նիզակափակ և սակրով փակելու դեպքեր, սակայն պատճեց կազմելու համար հիմնական դերը խաղացել է վահանը: Թեև հասկանալի է, որ նիզակափակի ժամանակ ևս պետք է վահանով փակվեր զորքը և նիզակը դուրս ցցելով հնարավորություն շտար թշնամուն մոտենալ իրենց: Մանրանկարների և քանդակների վրա ունենք մի քանի նմուշներ, որոնցով հնարավոր է գաղափար կազմել միջնադարում գործածված վահանի մասին, իսկ ուշ շրջանին վերաբերող, 17-րդ դարից սկսած, ունենք վահանների նմուշներ, որոնց մեջ կան տեղական ժողովրդական և զինվորական ձեի վահաններ, թեև վերջիններս Հայաստանին տիրող պետություններին են պատկանում:

Կարեռը նմուշ է նաև Մշու Առաքելոց վանքի 1134 թվին պատկանող դռան վրայի քանդակը, որտեղ մի շարք դենքերի հետ զինվորն իր ձախ ձեռքին բռնած ունի վահան: Այս քանդակի վահանը դարձյալ կլոր ձև ունի և կենտրոնը զարդարված է վարդաձև օրնամենտներով, մի բան, որ շատ տարածված է հայկական արվեստի բնադրավառում: Վահանի մի նմուշ ևս պահպանվել է Ախութամարում Գողիաթի ձեռքին, որտեղ դարձյալ վահանը կլոր է և շուրջը զարդարված է բշտիկաձև ուռուցիկներով, կենտրոնում կավարդաձև բուսական քանդակ: Վահանների բազմաթիվ նմուշներ կան ձեռագրերի մանրանկարների մեջ:

Հայտնի են սասունցիների և այլ տաճկահայ գավառների մինչև 20-րդ դարի սկիզբները գործածական վահանները, որոնք կաշուց և այլ նյութերից են շինած, իսկ ամրության համար վրան

<sup>1</sup> Դրասխանակերտցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆ., 1912, էջ 312:

երկաթե մեծագլուխ գամեր են ամրացրած և երբեմն էլ երկաթապատած։ Այդ վահանների նմանները գտնվել են ուրարտական Կարմիր Բլուրում, կենտրոնը՝ բրոնզից, շրջապատը՝ ծառի ճյուղերով հյուսած։

Սաղավարտը համարվում է զրահի կարևոր մասերից մեկը, ուր պաշտպանում է զինվորի գլուխն ամբողջովին։ Սաղավարտը տարբեր ժամանակներում պատրաստել են տարբեր մետաղներից, այն է՝ պղնձից, երկաթից և պողպատից։ Սաղավարտի գործածությանը ուրարտական քանդակների մեջ շատ հաճախ ենք հանդիպում։ Դրանցից մեկում՝ ուրարտական մի քանդակում, ուրարտական զինվորը կրում է գմբեթածե սրածայր սաղավարտ, որը ծածկում է ռազմիկի ճակատի կեսը և երկու կողմից անկյունածե ցած է իշնում ու պաշտպանում ռազմիկի ականջները։

Կարմիր Բլուրի պեղումների ժամանակ գտնվել են մի քանի բրոնզե սաղավարտներ, որոնցից մեկն արքայական է և պատկանում է ուրարտական Սարդուր թագավորին։ Այդ սաղավարտը հարուստ է քանդակներով և իր ամենաստորին եղրին ունի սեպագիր արձանագրություն թագավորի անունով։

Սաղավարտի ճակատի մասում քանդակված է երկու շարք կենաց ծառի պաշտամունքի տեսարանը, որոնք զետեղված են երկու կողմերից գլխահակ վիճակում գտնվող չորս մեծ օձերի (վիշապների) հովանու տակ, իսկ սաղավարտի ետնային մասը հեծյալների և ռազմասայլերի երկշարք պատկերներով է զարդարված։

Նույն պեղումներից գտնված զինվորների սաղավարտները շունեն այդ զարդարանքները, միայն թե նրանց ճակատին կաստղածե ինչ որ մի ուսուցիկ նշան, որ հավանաբար ուրարտական զորանշանն է, կամ տվյալ զորախմբի նշանը։ Այդ բոլոր սաղավարտներն ել գմբեթածե են և վերջանում են գալաթի սուր ելուստով։ Հույն պատմիշ Հերոդոտը հիշում է, որ հայ զինվորները, փոյտացիների և պաթաղոնացիների նման իրենց զիսին կրում էին բութ սաղավարտներ։ Սաղավարտի վիշերը տարածվում էին ծոծրակին և երկու կողմից ունենում. էր դեպի ետ կորացած հավելվածներ՝ ականջի մասը պաշտպանելու համար։ Այսուղ հետաքրքրականն այն է, որ սաղավարտի գագաթին դրված էր լինում եղջյուրածե մի աղեղ, որի ծայրերը թեքված են դեպի ներքև։

Սաղավարտը Փալստոսի և Եղիշեի մոտ կոչվել է նաև Երկարե գլխանոց (էջ 137): Իշխանական սաղավարտները տարբերվել են շարքային զինվորի սաղավարտից՝ ունենալով տոհմական որոշ նշան: Մանվել Մամիկոնյանի սաղավարտն ունեցել է արծվի տոհմական նշանը: Բուզանդը հիշում է, որ Մեհրուժանն իր սաղավարտի վրա նշան չուներ՝ անձանաշելի լինելու և իր զինվորներից շտարբերվելու համար: Սակայն սաղավարտի վրա նշան ունենալու մասին մեղ տեղեկություն է տալիս Խորենացին, երբ խոսում է Բելի մասին:

«Են առաջի ամբոխին եկեալ հասեալ ընտրիւք և վառելովք ոմամբք. և երկար միջոց ճանապարհին ընդ նա և ընդ ամբոխն. և ինքն գլխանոց ադուցեալ երկաթի, նշանաւորօք վերջօք»:<sup>1</sup> Ա. Օրբելյանի մոտ կարդում ենք Բաբեկ Սյունեցու մասին: «Երկաթագամ և բևեռապինդ սաղավարտիւն զահեղակերպ գլուխն և զճակատն պղնձեայ և տախտակամած յօրինուածով ամրացուցանէր», ապա ավելացնում է. «Վագրակերպեան սաղավարտաւն՝ ըզգեղեցիկն գլուխ»:<sup>2</sup> Իսկ Վարդան պատմիչը խոսելով վրաց Վախթանգ թագավորի մասին, հիշում է, որ նրա սաղավարտի առջևի մասում նկարված էր գայլի պատկեր, իսկ ետևում առյուծի:<sup>3</sup>

Ղեռնդ պատմիչը խոսելով Արտավազդի ապստամբության մասին ընդդեմ արարների, հիշում է նույնպես «ստանայր անդ զէնս և անօթս պատերազմի, և վառէր զինքն զրահիւք և սաղավարտիւք և ամենայն սպառազինութեամբ»:<sup>4</sup>

Այնուհետև Հովհան Մամիկոնյանը հիշում է, թե ինչպես մուրճով հարվածել են սաղավարտին. «և հասեալ Սմբատայ՝ եհար մրճովն ի վերայ գագաթանն, և գոգեաց զսաղաւարտն, և գլխոյն ոսկեալ՝ տեղի տայր սաղաւարտն մրճին Սմբատայ, և հաղիւ կարաց հանել»:<sup>5</sup> Իսկ Ուռհայեցին խոսելով թաթարների հարձակման մասին, հիշատակում է, թե ինչպես բարանի դեմ կովելու համար բանակալիններից մեկը «խնդրեաց զորավոր և քաջ ձի և զգեցեալ դրահս և եղեալ սաղաւարտ ի գլուխն»:<sup>6</sup> Նույն բանը հիշում է Թուլմա Արծրունին: Թեև մեր պատմիչները բազմիցս հիշա-

<sup>1</sup> Ա. Խորենացի, «Պատմութիւն Հայոց» էջ 38—39:

<sup>2</sup> Ա. Օրբելյան, «Պատմութիւն նահանգին Սիսական», էջ 38—39:

<sup>3</sup> Վ. Վարդանեալ, Հաւաքումն Պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 97:

<sup>4</sup> Ղեռնդ, «Պատմութիւննն», էջ 138:

<sup>5</sup> Յ. Մամիկոնեան, «Պատմութիւն Տարօնոյ», էջ 35:

<sup>6</sup> Ա. Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», էջ 120:

տակում են սաղավարտը, սակայն ձևի մասին գրեթե ոչ մի տեղեկություն չեն տալիս: Միայն միջնադարյան քանդակների վրա կան նրանց ձևերը: Առաքելոց վանքի դռան վերևի մասի քանդակի մեջ հեծյալ զինվորի սաղավարտն ունի բութ ձև, ծածկում է ճակատի կեսը և հետեւ կողմից փակում է ամբողջ ծոծրակը: Սաղավարտի նմուշներին մենք հանդիպում ենք նաև ձեռագրերում, որտեղ հայկական սաղավարտները սրագագաթ են (Վարդանանց պատերազմ և այլն), 13-րդ դարի բարձրաքանդակի մեջ Ամիր Հասանը ծածկել է մի սաղավարտ, առանց հավելվածների: Իսկ 15-րդ դարի ձեռագրերից մեկը, որտեղ նկարված է Մուշեղ Մամիկոնյանի ճակատամարտը, հեծյալների սաղավարտներն ավելի սրածայր են և ետևի մասում ունեն հավելված, մարտի առաջնորդի (Մամիկոնյանի) սաղավարտի ճակատին նկարված է խաչ: Սաղավարտի նույն ձևը մենք տեսնում ենք 1397 թ. մի ձեռագրում և Սսի 13-րդ դարի ձեռագրերից մեկում:

Եթե հայ զինվորը պատերազմում գլուխուր հարվածներից պաշտպանելու համար կրում էր սաղավարտ, այնպես էլ իրանը պաշտպանելու համար ուազմիկները, բացառությամբ աղեղնավորների, հագնում էին մինչև ազդրերը հասնող զրահներ, լրացուցիչ կարգով կրում էին սրունքների ու բազուկների համար պատրաստված հատուկ զրահներ (պահպանակներ), որոնք կոշվում էին սոնապան, բազպան: Այս զրահները պատրաստված էին լինում տարբեր նյութերից և իրենց ձևերով տարբեր էին լինում: Զրահները պատրաստվում էին բացի մետաղյա մասերից նաև կաշվից, վուշից, մազից և այլն: Զրահի այն մասը, որ ծածկում էր ուազմիկի իրանը, իր գործվածքով և ձևով տարբերվում էր մյուսներից: Մեր պատմիչները հիշում են «շերտաւոր», այսինքն մետաղի կտորները շերտ-շերտ հագնում էին մեկը մյուսի վրա ձկան թեփուկների նման: Շերտավոր զրահներին անվանել են նաև կողենք, որ հյուսված էր միմյանց հետ և ուներ մոտավորապես տերեւի ձև: Այդ ձևի հյուսվածքների մենք հանդիպում ենք նաև պարսկական քանդակների վրա: Զրահի մյուս տեսակը կոչվել է վերտի, որը շղթայանման խիտ հյուսվածք է ունենում. այս ձևի հյուսվածքը չի խանգարում մարտիկի շարժումները: Խորենացին խոսելով Հայկի և Բելի կոիվների մասին, գրում է. «Եւ տախտակս պղնձիս թիկնաց և լանջաց»:<sup>1</sup> Խոսելով Տրդատի մասին,

<sup>1</sup> Մ. Խորենացի, «Պատմութիւն Հայոց», էջ 39:

Հիշում է. «Եւ ինքն վառեալ վերտ պահպանակօք, ուր ոչ գցէին նետք»;<sup>1</sup> Խորենացու մոտ հիշատակված տախտակս՝ թիկունքի և լանջերի պղնձե տախտակները համապատասխանում են վարապանակին (լանջանոց, վերարկու): Լանջանոցին մեր պատմիշներն անվանել են նաև ճաւշ (Ճօշ): Ն. Շնորհալին «Ողբ Եղեսիոյ»-ի մեջ պատմելով Զանգի ամիրայի զորքերի Եղեսիայի վրա հարձակվելու մասին, ի միջի այլոց, ասում է՝ «Եգետ բազում զօրս հագեալ Ճօշանս յեփեալ կաշոյս», «Զրահաւորք մըկնդաւորք, Ճօշիւք պատեալ՝ բոլոր անձինս», «Եւ ձիս և զորիս և ուղտս անհամարս, և վրան ջօշան, և այլ սլեհ որ ոչ գոյ թիւ»;<sup>2</sup> Ըստ Քսենոֆոնի նկարագրության՝ արևելյան ժողովուրդները, որոնց թվում նաև հայերը, պատերազմի ժամանակ հագնում էին վուշից պատրաստած զգեստներ, որոնց փեշերը հասնում էին մինչև ազդրերի կեսը:

Խորենացին խոսելով Զիրավ դաշտի ճակատամարտի մասին, նշում է, թե ոչ միայն հայերը, այլև Հույները հագած ունեին կաշվից զգեստներ: Թովմա Արծրունին պատմելով Բուղայի զորքի մասին, նույնպես հիշում է, որ հրի դեմ պաշտպանվելու համար զորքը հագնում էր մազե զգեստ:<sup>3</sup> Իտազմիկը հագնում էր նաև պատերազմին հարմար կոշիկներ, որոնք կոշվել են օդ և շատ հաճախ՝ մույկ. այդ մասին Թովմա Արծրունու և մյուս պատմիշների մոտ կան բազմաթիվ հիշատակություններ: Բացի այդ՝ զինվորը պարտադիր կերպով զրահի վրա հագնում էր պարեգոտ:

Հայկական բարձրավանդակը դարեր շարունակ ենթարկվել է օտարերկրյա զավթիշների հարձակումներին, որոնք ամեն շանք գործ են դրել ընկճելու և իրենց ենթարկելու հայ ժողովորին: Հայ ժողովուրդը բազմաթիվ թշնամիների դեմ զինված պայքար է մղել իր երկրի անկախությունը պահպանելու համար: Այդ դաժան կոփիվներում հայ ժողովուրդը ցուցաբերել է անսահման նվիրվածություն, տոկունություն իր հայրենիքի նկատմամբ և կատարել է հերոսություններ: Աշխատավոր հայ ժողովուրդը կրկնակի վորձությունների է ենթարկվել և հերոսաբար կովել ինչպես հայ շահագործող, այնպես էլ օտարերկրյա զավթիշների դեմ: Թշնամու դեմ մղված այդ դարավոր պայքարի մեջ՝ հանուն պաշտպանու-

<sup>1</sup> Մ. Խորենացի, էջ 230:

<sup>2</sup> Մ. Ռուհայեցի, էջ 426:

<sup>3</sup> Թ. Արծրունի, էջ 220:

թյան ապահովման, զարգացավ ու առաջնակարգ տեղ գրավեց զինագործության արհեստը, որի համար Հայաստանն ուներ բավարար շափով թե՛ հում նյութ և թե՛ վարպետ արհեստավորներ, որոնք ոչ միայն պատրաստել են մարտական զենքեր, այլև իրենք հորինել են պաշտպանության զանազան միջոցառումներ՝ թշնամիների ամեն տեսակ զենքերից պաշտպանվելու համար. բացի այդ, սարքավորել և կոհիվների ժամանակ օդտագործել են հրձիգ միջոցներ և ամրություններ ավերող մեքենաներ:

[ՀԱՅՈՒ]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0680633

ԳԻՆԸ 3 Ա.

A  
110836